Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

40ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 45 (1995) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 21, 2020
VOLUME 40, NO. 45 (1995) SATURDAY NOVEMBER 21, 2020

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

Փութինի Համաձայն, Ստեղծուած Են Պայմաններ Հակամարտութեան Ամբողջական Կարգաւորման Համար՝ Արդար Հիմքի Վրայ

Ղարաբաղի հարցով պայմանաւորուածութիւնները կը պահպանուին, եւ այս պայմաններ կը ստեղծէ արդար հիմքի վրայ հակամարտութիւնը կարգաւորելու համար, Նոյեմբեր 17-ին յայտարարած է Ռուսաստանի նախագահը: Վլատիմիր Փութինի խօսքով՝ այսօր ստեղծուած են պայմաններ ղարաբաղեան ճգնաժամի երկարաժամկէտ եւ ամբողջական կարգաւորման համար, «ընդ որում արդար հիմքի վրայ՝ հաշուի առնելով Ատրպէյճանցիներու, ինչպէս նաեւ հայերու շահերը»:

Ղարաբաղի մասին այսօր խօսած է նաեւ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը, «Ռուսաստանը կը գործադրէ բոլոր ջանքերը, որպէսզի թոյլ չտայ վերանայելու Նոյեմբեր 9-ին Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի ղեկավարներու ստորագրած համաձայնագիրը»,- յայտարարած է Սերկէյ Լաւրով, սակայն հրաժարած է յստակ պատասխան տալէ Արցախի կարգավիճակի մասին հարցին:

Ատրպէյճանցի լրագրողը Լաւրովէն խնդրած է մեկնաբանել Հարբի բացարձակ մեծամասնութիւնը համակարծիք են մէկ հարցում՝ Սահմանադրութեանը համապատասխան վարչապետի հրաժարական կամ պաշտօնավարման դադրեցում եւ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ:

«Այս օրերին մեզանից իւրաքանչիւրը, յատկապէս քաղաքական գործիչները եւ պետական պաշտօնեաները պէտք է դրսեւորեն բարձր պատասխանատուութիւն եւ զսպուածութիւն՝ ջանքերը կենտրոնացնելով բացառապէս ստեղծուած ճգնաժամը յաղթահարելու ուղիներ փնտռելու վրայ:

«Հանդիպումների եւ խորհրդակցութիւնների արդիւնքում ձեւաւորուած իմ դիտարկումները հետեւեալն են.

«Հաշուի առնելով ստեղծուած իրավիճակը եւ այն արժանապատուօրէն յաղթահարելու հրամայականը, ականջալուր լինելով հանրային պահանջին, ակնյայտ է, որ երկիրը ցնցումներից զերծ պահելու համար ի վերջոյ անխուսափելի են լինելու Ազգային Ժողովի արտահերթ ընտրութիւնները:

«Այս համատեքստում, իմ կարծիքով, միակ պատասխանատու մօտեցումը կարող է լինել կառավարութեան եւ իշխող քաղաքական ուժի կողմից սեփական ներուժի օբիեկտիւ գնահատելը եւ սեղմ ժամկէտում ճանապարհային քարտէզ ներկայացնելը, որով կը նախատեսուեն համապատասխան

Շար.ը էջ 5

Ընդդիմութիւնը Կը Շարունակէ Պահանջել Փաշինեանի Հրաժարականը Նախագահ Արմէն Սարգսեան Կ՚առաջարկէ՝ Ազգային Համաձայնութեան Կառավարութիւն Եւ Նոր Ընտրութիւններ

Արցախեան թատերաբեմին վրայ տեղի ունեցող զարգացումները եւ յատկապէս Նոյեմբեր 9-ին ստորագրուած զինադադարի յայտարարութենէն ետք Հայաստանի ներքաղաքական կեանքը կ՚անցնի փոթորիկներէ: Ընդդիմադրութիւնը կը փորձէ հասնիլ վարչապետ Փաշինեանի հրաժարականին ու այդ նպատակով Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ կը կազմակերպէ ոչ շատ մարդաշատ հանրահաւաքներ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան կը յայտարարէ որ, իր օրակարգին վրայ հրաժարականի հարց չկայ: «Իմ օրակարգում մտնում է հանրապետութիւնում կայունութիւն եւ անվտանգութիւն ապահովելը, ուրիշ հարց իմ օրակարգում այսօր չկայ»,. ըսաւ վարչապետը առցանց կազմակերպուած մամլոյ ասուլիսի ընթացքին:

Երկուշաբթի, Նոյեմբեր 16-ի երեկոյեան ՀՀ նախագահ հանդէս եկաւ ուղերձով՝ առաջարկելով ազգային համաձայնութեան կառավարութեան կազմութիւնը եւ ապա արտահերթ ընտրութիւններու կայացումը:

Երկիրը ցնցումներէ զերծ պահելու համար անխուսափելի պիտի ըլլայ խուսափիլ Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւններէն, կարծիք յայտնեց նախագահը, ըսելով թէ այդ համոզումին եկած է վերջին օրերուն իր ունեցած քաղաքական խորհրդակցութիւններու արդիւնքով:

«Հանդիպման մասնակիցներ-

Ընդդիմութեան հանրահաւաքներէն մին՝ Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ

Շար.ը էջ 5

Հնչակեան Կուսակցութեան Այցը Հայաստանի Աւագ Հիւպատոս՝ Արմէն Բայբուրդեանին

Երկուշաբթի, Նոյեմբերի 16-ին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի շրջանը ներկայացնող պատուիրակութիւն մը հանդիպում մը ունեցաւ Լոս Անճելըսի մէջ Հայաստանի աւագ հիւպատոս-դեսպան Արմէն Բայբուրդեանի հետ:

Հնչակեան պատուիրակութիւնը կը գլխաւորէր ատենապետ ընկեր Վազգէն Խոտանեան, մասնակցութեամբ՝ փոխ ատենապետ ընկ. Գ. Մոլոյեանի, արտաքին յարաբերութիւններու դիւանապետ ընկ. Մ. Խաչատուրեանի եւ երիտասարդականի դիւանի պատասխանատու ընկ. Ռ. Մուղալեանի:

Սոյն հանդիպման սկիզբը ընկ. Վազգէն Խոտանեան ՍԴՀԿ-ի ԱՄՆի բոլոր շրջաններու եւ կառոյցներու անունով իր վշտակցութիւնները յայտնեց Արցախի գոյամարտի ընթացքին զոհուած ազատամարտիկներու ընտանիքներուն եւ բոլոր հարազատներուն:

Զրոյցի ընթացքին անդրադարձ եղաւ Արցախի հերոսամարտի տարբեր հանգրուաններուն, զինադադարին, զանգուածային արտագաղթին եւ տուն վերադարձողներուն, ինչպէս նաեւ փախստականներու կարգավիճակին մասին, որ ներկայիս կ՚անցնի ճգնաժամային վիճակներէ:

Անդրադարձ եղաւ նաեւ Հայաստանի ներքին իրավիճակին ու կարեւոր նկատուեցաւ ներքին կայունութեան պահպանումը:

Խորհրդակցութեան նիւթ դարձաւ նաեւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կազմակերպած այս տարուան թելեթոնը եւ շեշտուեցաւ անոր մասնակցելու կարեւորութիւնը, նկատի առնելով այն մեծ ծրագիրները, որոնք նախատեսուած են հասնելու համար Արցախի ժողովուրդի կարիքներուն:

Յարգելի հիւպատոսը տեղեկացուց որ, Լաս Վեկասի մէջ կը նախատեսուի որ քաղաքը ընդգրկող գաւառի իշխանութիւնները պաշտօնապէս ճանչնան Արցախի անկախութիւնը:

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Յայտարարութիւնը Հայաստանի Ներկայ Իրավիճակին Կապակցութեամբ

Անտարակոյս, Հայաստանին ու Արցախին պարտադրուած զինադադարի նուաստացուցիչ պայմանագիրը յառաջացուցած է համայն հայութեան արդարացի ցասումն ու խոր ընդվզումը: Ամբողջ 43 օրեր, հայ քաջարի զինուորն ու կամաւորը, գերագոյն զոհողութեան գնով, արիաբար ու բազում սխրանքներ գործելով պաշտպանեց հայրենիքի ամէն մէկ թիզ հողը, սակայն դժբախտաբար չկարողացաւ յաղթահարել՝ իրմէ սպառազինութեամբ ու քանակով տասնապատիկ գերակայութիւն ունեցող թշնամիներու՝ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ առաւելութիւնը: Մենք կը խոնարհինք մեր նահատակուած հերոսներու յիշատակին առջեւ ու մեր խորագոյն ցաւակցութիւնները կը յայտնենք անոնց հարազատներուն եւ համայն հայ ժողովուրդին:

Միւս կողմէ, դատելով Հայաստանի եւ Արցախի քաղաքական ու ռազմական ղեկավարութեան պաշտօնական յայտարարութիւններէն եւ ներկայացուցած փաստարկներէն, յստակ կը դառնայ, որ այս զինադադարին այլընտրանքը ոչ միայն ամբողջ Արցախի անմիջական կորուստն էր, այլ մեր սահմանները տակաւին պաշտպանող հազարաւոր հայ զինուորներու պաշարման ու ջարդի ենթարկուելու իրական վտանգը:

Շար.ը էջ 5

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Ինչ է Խոստանում ԱՄՆ-ի Ու Ֆրանսայի Վերադարձը Կովկաս. Հայաստանը Չպէտք է Յապաղի

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

Մինսկի խմբի երկու համանախագահներ ԱՄՆ-ը եւ Ֆրանսան վերադառնում են Կովկաս, որտեղ երրորդ համանախագահ Ռուսաստանը, օրերս պայմանաւորուելով Թուրքիայի հետ, դադարեցրել է Սեպտեմբերի 27-ին Անքարայի սանձազերծած ահաբեկչական պատերազմը: Դադարի իրավիճակն ու պայմանները յայտնի են, ինչպէս նաեւ յայտնի են խնդիրները, որ Նոյեմբերի 9-ից յետոյ հրատապ կարգով կանգնած են Հայաստանի առաջ: Դրանք են՝ պատերազմի վերսկսման բացառումը, որում առանցքային դեր ունեն ռուս խաղաղապահները, եւ յաջորդիւ, այսպէս ասած, տարածքների՝ Քարվաճառի եւ Լաչինի փրկումը, Շուշիի եւ Հադրութի հարցերը: Քարվաճառից ու Լաչինից մարդիկ արդէն դուրս են գալիս, դուրս են գալիս հայկական ուժերը, սակայն այստեղ իրավիճակը անշուշտ միարժէք չէ: Ի վերջոյ, կայ առերեւոյթ պատկեր, եւ կայ իրավիճակ, այսպէս ասած, քաղաքական իրական դետնի վրայ: Այդ դետնի վրայ է, որ պատկերը միարժէք չէ եւ ԱՄՆ-ի ու Ֆրանսայի մուտքով կարող է փոխուել: Յամենայնդէպս, կայ հնարաւորութիւն, որը առաւելագոյնս օգտագործելու համար հնարաւորն ու անհնարինն անելը հայկական կողմի պարտքն է: Այդ խնդիրը լուծելու համար իհարկէ պէտք է աշխատանք ոչ միայն ԱՄՆ-ի ու Ֆրանսայի, այլ նաեւ Ռուսաստանի հետ:

Անկասկած է մի բան, որ ներկայումս առանցքային գործօնը դարձել է Ռուսաստանը: Միեւնոյն ժամանակ, սակայն, Մոսկուայի համար իր ձեռքբերումը ամրացնելու հարցում օգտակար է ԱՄՆ-ի ու Ֆրանսայի վերադարձը, նաեւ այն հարցադրումներով, որոնք կը բարդացնեն քաղաքական իրավիճակը, կը բարդացնեն հարցադրումները եւ այդպիսով կը ստեղծեն բաւականին իրարամերժ բովանդակութիւն, ինչը թոյլ կը տայ Ռուսաստանին մի կողմից՝ խուսափել համաձայնագրի կատարման ընթացքից շեղումների համար միանձնեայ պատասխանատուութիւն կրելուց՝ որպէս մոդերատոր, միւս կողմից՝ ունենալ այդ շեղումները:

Անկասկած է, որ Մոսկուայի շահերից է բխում թէ՛ տարածքները չվերադարձնելը, թէ՛ Հադրութի եւ Շուշիի խնդիրները լուծելն ու այնտեղ Ատրպէյճանի հաստատուն ներկայութիւնը կանխելը: Սրանք անշուշտ բարդ խնդիրներ են, սակայն դիւանագիտութիւնը կոչուած է հենց այդպիսի խնդիրներ լուծելու: Ի վերջոյ, եթէ հայկական կողմը չի կարողանում մնալ, ապա պէտք է ձգտել անել ամէն ինչ ատրպէյճանցիներին էլ դա թոյլ չտալու եւ ռուսական խաղաղապահ մանդատի գործողութեան աշխարհագրութիւնը ընդլայնելու համար: Այդպիսով հնարաւոր է ընդլայնել նաեւ ժամանակային տարածութիւն, որը թոյլ կը տայ յետագայում աւելի շատ ժամանակ ունենալ աւելի սկզբունքային խնդիրներ լուծելու համար:

Երեւանը բնականաբար պէտք է փորձի ձեւաւորել ընդհանուր հետաքրքրութեան ու շահերի շրջանակ Մինսկի խմբի երեք համանախագահների միջեւ, որպէսզի պահպանուի առնուազն այն ստատուս-քուոն, որ հաստատուած է պատերազմով, ոչ թէ համաձայնագրով: Առաջին փուլում պէտք է լուծել այդ խնդիրը, որի լուծման հարցում, ընդ որում, կարող է օգտակար լինել հենց պատերազմական ստատուս-քուոյի շրջանակում մնացած խնդիրների բարձրաձայնումը՝ Հադրութ եւ Շուշի, յատկապէս հայկական մարգարտի մշակութային եւ կրօնական ժառանգութեան պահպանման համատեքստում:

Առաջին փուլում այդ հարցադրումների բարձրաձայնումը կարող է թոյլ տալ մեծ հնարաւորութիւն ստանալ զիջման ենթակայ տարածքների հարցն առկախելու եւ հնարաւորինս սառեցնելու համար՝ թէկուզ ռուս խաղաղապահների ենթակայութեան ներքոյ տեղափոխելու գնով: ԱՄՆ-ն ու Ֆրանսան կարող են այդ հարցում լինել իրապէս օգտակար գործընկեր թէ՛ Հայաստանի, թէ՛ ՌԴ-ի համար, որովհետեւ Ռուսաստանը ունի Անքարայի եւ Պաքուի հետ աւելի ուժեղ քաղաքական դիրքից խօսելու անհրաժեշտութիւն: Ըստ այդմ, գործընթացը հնարաւորինս արագ Մինսկի խումբ տեղափոխելը դառնում է քաղաքական էական առաջնահերթութիւն:

Այդտեղ արդէն Հայաստանը կը դնի իր առաջ երկրորդ փուլի, այսինքն՝ Շուշիի եւ Հադրութի շրջանի խնդիրը: Միայն Ռուսաստանը հասկանալիօրէն չի վերցնելու իր վրայ այդ խնդիրները, թէեւ իհարկէ պատրաստակամ կը լինի օգտուել ԱՄՆ-ի ու Ֆրանսայի միջոցով ստանալիք արդիւնքից:

Ինչ շահ ունեն ԱՄՆ-ն ու Ֆրանսան: Մի կողմից՝ իհարկէ, Կովկասում ներկայութեան հանգամանքն է, միւս կողմից՝ Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ հաւասարակշռութեան ապահովման, իսկ դրա համար պէտք է, որ Թուրքիան չստանայ աւելին, քան կարողացել է վերցնել պատերազմով, ինչպէս նաեւ նրանք այստեղ վերադառնալով կարող են Թուրքիայի հետ աւելի համարձակ խօսել այլ ռեգիոններում, որտեղ թէ՛ Ուաշինկթընը, թէ՛ Փարիզը ունեն ոչ պակաս հարցեր Անքարային, քան, օրինակ, Մոսկուային:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Թուրքիան Կորցրել է Իրականութեան Զգացումը եւ Առաջարկում է Խաղաղութեան Դիմաց Բացել Հայաստանի Հետ Սահմանները

ԱՐՄԷՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Արցախում սանձազերծած ագրեսիայից յետոյ Թուրքիան դեռ յոյսեր ունի, որ բացելով Հայաստանի հետ սահմանները՝ կը կարողանայ երկու երկրների միջեւ զարգացնել տնտեսական յարաբերութիւններն ու առեւտուրը: Այլ կերպ ասած՝ մեր ոխերիմ հարեւանը կորցրել է իրականութեան զգացողութիւնը: Վերջինիս արտաքին գործերի նախարարը յայտարարում է, թէ Հայաստանի հետ իր սահմանների բացումը մեր քաղաքացիների ինքնազգացողութիւնը կը լաւացնի:

Այն, որ Թուրքիային երբեւէ չի ներուելու մեր հերոս տղաների թափած արիւնը, անքննելի է: Երբէք չի մոռացուելու, որ մեր զոհերի առնուազն 90 տոկոսը եղել է Թուրք օպերատորների կառավարած բայրաքթարների եւ անօդաչուների հարուածներից: Թէ՛ վախկոտ ատրպէյճանցին, թէ՛ փողի համար կռուող ջիհադիստ ծայրայեղականները երբեք չէին փորձի մերձամարտի մտնել հայ 18-19 տարեկան զինուորի հետ: Ինչպէս միշտ, այս պատերազմում էլ գործեց Թուրքի նենգ ձեռագիրը՝ գիշերով, գաղտագողի, թիկունքից ԱԹՍ-ների հարուածներով հայկական զինուժին հասցուեցին ամենամեծ կորուստները: Այս պատերազմում որոշիչ դարձած ԱԹՍ-ների գործօնը չի ներուելու, թերեւս, նաեւ Իսրայէլին:

Թուրքիայի հետ սահմանների բացումն անթոյլատրելի է նաեւ տնտեսական առկայ իրավիճակի եւ գործօնների պատճառներով: Հետանկախ Հայաստանն իր տնտեսութիւնը ձեւաւորել եւ զարգացրել է առանց Թուրքիայի: Հետեւաբար, միանշանակ է, որ յետայսու էլ այդ քաղաքականութիւնը շարունակուելու է: Աւելին՝ այս պատերազմից յետոյ հենց Հայաստանը պէտք է յայտարարի, որ փակում է Թուրքիայի հետ իր սահմանները: Հոկտեմբերին ԱԺ-ի ընդունած Թուրքական ապրանքների ներկրման արգելքին, կարծում ենք, պէտք է գումարուեն Թուրքիայի հետ տնտեսական յարաբերութիւնները բացառող նաեւ այլ օրինագծեր:

Տնտեսական լուրջ կոլապսի առջեւ յայտնուած Թուրքիան, Հայաստանի հետ սահմանների բացման խոստումով, շահագրգռուած է աւելի շուտ լուծել սեփական խնդիրները: Այս պետութեան քաղաքական ղեկավարութիւնը քայլեր է ձեռնարկում կանգնեցնելու սեփական տնտեսութեան անկումը, որն օրէցօր աւելի է ուժգնանում:

Միւս կողմից էլ սահմանների բացումը կը նշանակի համաձայնել Թուրքիայի խաղաղ էքսպանսիայի հետ: Միանշանակ կանխատեսելի է, որ այդ երկրի հետ տնտեսական համագործակցութեան դէպքում ծաւալներով բազմապատիկ մեծ Թուրքիայի տնտեսական համակարգը կը կլանի հայկական տնտեսութիւնը: Հետեւաբար, Թուրքիայի հետ սահմանների բացումը հակասում է մեր երկրի անվտանգութեան սկզբունքներին:

Յատկանշական է, որ Թուրքիայի արտաքին գործերի նախարարը տնտեսական համագործակցութեան առաջարկին զուգահեռ հնչեցնում է նաեւ սպառնալիք, որ եթէ Հայաստանը հրաժարուի հրադադարի յայտարարութեան պայմանները կատարելուց, կը հետեւի նոր հարուած Արցախին: Սա փաստում է, որ այս երկիրը հաւատարիմ է մնում իր քաղաքականութեանը եւ երբեք չի հրաժարուի Հայաստանի ու Արցախի դէմ տարբեր ձեւաչափերով յարձակումներ գործելու իր նենգ մտադրութիւններից:

Վերոյիշեալ հնարաւոր բացասական զարգացումներին Հայաստանը, անշուշտ, պէտք է պատասխանի հիմնաւոր հակաքայլերով: Ստեղծուած նոր իրավիճակում տնտեսական քաղաքականութեան նոր ուղենիշների սահմանումը դառնում է մեր երկրի առաջնային խնդիրներից մէկը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԼՈՒՐԵՐ

Նիկոլ Փաշինեանի Օրակարգին Վրայ Հրաժարականի Հարց Չկայ

Նիկոլ Փաշինեան առցանց մամլոյ ասուլիսի ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի օրակարգին վրայ հրաժարականի հարց չկայ: Առցանց ասուլիսի ժամանակ պատասխանելով հարցին, թէ արդեօք իր օրակարգին վրայ հրաժարական տալու հարց կայ, Հայաստանի վարչապետը ըսած է. «Իմ օրակարգում մտնում է հանրապետութիւնում կայունութիւն եւ անվտանգութիւն ապահովելը, ուրիշ հարց իմ օրակարգում այսօր չկայ»:

Տարածքներու յանձնման մասին փաստաթուղթ ստորագրած Փաշինեան նշած է՝ եթէ հանրային վստահութիւնը իր նկատմամբ բաւարար ըլլայ, ինքը կը մասնակցի նաեւ Արցախի կարգավիճակի վերաբերեալ հետագայ բանակցութիւններուն. «Կարծում եմ, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը պէտք է մասնակցի այդ բանակցութիւններին, բայց հիմա գործնականում տեղի է ունենում բանակցային նոր օրակարգի ձեւաւորման գործընթաց, եւ եթէ պարզուի, որ բաւարար չէ {հանրային վստահութիւնը}, մենք չենք կարող մասնակցել այդ բանակցութիւններին, եթէ կը մասնակցենք, ուրեմն բաւարար է»:

Միեւնոյն ժամանակ Փաշինեան ընդունած է՝ ինքն է այն թիւ մէկ պաշտօնեան, որ տեղի ունեցածի համար կը կրէ պատասխանատուութիւն, բայց շատ կարեւոր է, որ հիմա ժողովուրդի հետ տեղի ունենայ խօսակցութիւն, եւ բոլորին պարզ ըլլայ, թէ ինչ տեղի ունեցած է. «Ես եմ այն թիւ մէկ պաշտօնեան, ով պատասխանատու է տեղի ունեցածի համար, եւ ես հասկանում եմ, նաեւ ինձ հաշիւ եմ տալիս, որ այս փաստի բերումով, ինչպէս նախկինում գործունէութեան բերումով պէտք է կանգնեմ, եթէ շատ պայմանական ասենք կամ մի քիչ սուր ձեւով ձեւակերպեմ, մեր ժողովրդի դատի առաջ»:

Վարչապետը արձանագրած է նաեւ, թէ Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու համատեղ յայտարարութենէն ետք Արցախի պաշտպանութեան բանակը պիտի ունենայ նոյն կարգավիճակը, ինչ նախապէս էր. «Արցախի պաշտպանութեան բանակը կայ, եւ Արցախի պաշտպանութեան բանակը շարունակելու է գոյութիւն ունենալ, եւ Արցախի պաշտպանութեան բանակը պէտք է զարգանայ, պէտք է հզօրանայ եւ պէտք է նաեւ երաշխաւորը լինի Արցախի ինքնիշխանութեան»:

Արցախի Նախագահ. «Հայրենիքը Հեռու Պահել Այնպիսի Ցնցումներէ, Որոնք Կրնան Դառնալ Հայոց Պետականութեան Գերեզմանափորը»

Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան

Շուշիի մատոյցներէն դուրս հանուած են շուրջ 150 հայ զինծառայողներու մարմինները, այդ մասին դիմատեսրի իր էջին վրայ գրած է Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան՝ նշելով, որ այսօր՝ Նոյեմբեր 16-ին իր հերթական ծանր օրերէն մէկն էր:

«Դեռեւս հարիւրաւոր մարմիններ գտնուում են մարտադաշտերում՝ իրենց հարազատներին ու ամբողջ ժողովրդին պահելով անորոշութեան ու ցաւի մէջ: Այս օրերին ես ինքս մեծ ժամանակ եմ տրամադրում զոհերի ու անյայտ կորածների հարազատներին՝ իրենց ցաւը սփոփելով եւ համատեղ փնտռելով մեր նահատակ եղբայրներին», - գրած է Յարութիւնեան:

Արցախի նախագահի խօսքով՝ այդ բարոյական պարտականութեան կատարմանը զուգահեռ խնդիր կայ արագօրէն բարձրացնելու Հայրենիքի անվտանգութեան երաշխիքները եւ երկարատեւ ու ծանր ջանքերով զբաղուիլ Արցախի ու հայ ժողովուրդի յետպատերազմեան վերականգնման կարեւորագոյն գործով:

Ի հարկէ, կան նաեւ այլ արտաքին ու ներքին բարդ մարտահրաւէրներ, սակայն անոնցմէ առաւել առաջնահերթօրէն Արցախի նախագահը նշած է, որ զինք կ՚անհանգստացնեն Մայր Հայրենիքի ներքին կայունութիւնն ու համերաշխութիւնը խաթարող լրջագոյն վտանգները:

«Հաշուի առնելով այս ծանրագոյն ժամանակաշրջանում մեր ազգային ու պետական համերաշխութեան ու միասնականութեան անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ իմ պարտաւորութիւնն անմասն չմնալու համահայկական վճռորոշ հարցերի լուծումից՝ իմ խիստ անհանգստութիւնն եմ յայտնում Հայաստանի Հանրապետութիւնում դրսեւորուող անհանդուրժողական ու բռնութիւնայեն միտումների առթիւ», - Դիմատեսրին վրայ գրած է Արայիկ Յարութիւնեան:

Ան խստագոյն կերպով յորդորած է Հայաստանի Հանրապետութեան ներքաղաքական գործընթացներուն ընդգրկուած բոլոր ուժերուն ու անձանց՝ ցուցաբերել ազգային ու պետական բարձր սրտցաւութիւն ու ողջախոհութիւն եւ Հայրենիքը հեռու պահել այնպիսի ցնցումներէն, որոնք այս իրավիճակին մէջ կրնան դառնալ հայոց պետականութեան գերեզմանափորը:

Արծրուն Յովհաննիսեան Կը Տեղեկացնէ Իր Դէմ Յարձակման Մասին



Պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցչ Արծրուն Յովհաննիսեան

Արծրուն Յովհաննիսեան, որ պատերազմի աւարտէն օրեր ետք յայտնեց, որ կը հեռանայ Պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցչի աշխատանքէն, Նոյեմբեր 17-ին յայտարարեց իր դէմ յարձակման մասին:

Յովհաննիսեան դիմատեսրի իր էջին վրայ գրած է, որ ամսու 9-էն սկսեալ կը ստանայ տարբեր սպառնալիքներ, սակայն նոյնիսկ ակնյայտ հաշուեյարդարի կոչերուն չէ արձագանգած: Ոստիկանութեան մերժած է բողոք ներկայացնել այդ մարդոց դէմ:

«Երէկ գիշեր երկու անձ վրաս յարձակում գործեցին, բարեբախտաբար կարողացայ ինքնապաշտպանուել: Որեւէ մէկից չեմ վախենում եւ որեւէ մէկին էլ ինձ թշնամի չեմ համարում: Սակայն քանի որ այսօր էլ շարունակում են հաշուեյարդարի կոչերն ու սպառնալիքները, քանի որ որոշ տեղերում ինձ հետեւում են, ստիպուած եմ դիմել ոստիկանութիւն», - գրած է Յովհաննիսեան:

Նշենք, որ պատերազմի օրերուն Յովհաննիսեանն էր, որպէս ՊՆ ներկայացուցիչ, ամէն երեկոյ մամլոյ ասուլիսի միջոցով հանրութեան կը տեղեկացնէր սահմանին տիրող իրավիճակը:

Վարչապետի Դէմ Մահափորձի Գործով Կասկածեալները Ազատ Արձակուեցան

Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանի դատաւոր՝ Ռոպերթ Պապոյեան մերժեց Ազգային անվտանգութեան ծառայութեան (ԱԱԾ) միջնորդութիւնը «Հանրապետականի» խորհուրդի անդամ՝ Վահրամ Բաղդասարեանը կալանաւորելու մասին, ինչպէս նաեւ անհիմն համարեց երկու օր առաջ Բաղդասարեանը ձերբակալելու որոշումը:

Նախկին իշխող «Հանրապետական» խմբակցութեան ղեկավար՝ Վահրամ Բաղդասարեան ազատ արձակուեցաւ, երբ դատարանի որոշումը ներկայացուեցաւ ԱԱԾ-ի քննիչին:

Օրերս ԱԱԾ-ն քրէական գործ յարուցեց իշխանութեան իւրացումը եւ վարչապետի սպանութիւնը նախապատրաստելու յօդուածներով: Այս գործով մեղադրանք առաջադրուած է ինչպէս Վահրամ Բաղդասարեանին, այնպէս ալ երէկ՝ Նոյեմբեր 15-ին ձերբակալութենէն ազատ արձակուած Ազգային անվտանգութեան ծառայութեան նախկին տնօրէն, «Հայրենիք» կուսակցութեան նախագահ՝ Արթուր Վանեցեանին, «Սիսական» Ջոկատի հրամանատար՝ Աշոտ Մինասեանին եւ Հայ Յեղափոխական դաշնակցութեան անդամ, արուեստագէտ՝ Աշոտ Աւագեանին: Վերջին երկուքը այս պահուն ձերբակալուած են:

ԱԱԾ-ն շաբաթ օր հրապարակեց հեռախօսային խօսակցութեան ձայնագրութիւն մը, ուր ըստ իրաւապահներուն՝ կը խօսին այս գործով մեղադրեալ՝ Վահրամ Բաղդասարեանը, դաշնակցական Աշոտ Աւագեանը եւ «Սիսական» Ջոկատի հրամանատար՝ Աշոտ Մինասեանը:

Վահրամ Բաղդասարեան (ըստ ԱԱԾ-ի) - Դէ էտ արդէն էգուց՝ ժամը 2-ին, կը յստակացնենք, 4-ին հաւաք ենք անում նորից, մեծ, ինչքան հնարաւոր է, տեսնենք՝ ինչ կարանք անենք: Արդէն պիտի քայլեր անենք էլի, մի հատ մի քանի տարբերակներ կան, լաւ տեսնենք, վաղը 2-ին քննարկենք:

Աշոտ Մինասեան (ըստ ԱԱԾ-ի) - Բանը, չէ՞ք զգում, որ քայլելով, հաւաք անելով բան դուրս չի գա:

Վահրամ Բաղդասարեան (ըստ ԱԱԾ-ի) - Յստակ որոշում կայ, ասենք, թէ որն ա քայլն էլի:

Աշոտ Մինասեան (ըստ ԱԱԾ-ի) - Հա, իրանք ուզում են պահեն, որ էտ ամէն ինչը...Մարդ չունէ՞ք, որ մտնի իրա նոյն զօրքի մէջ, նոյն իրա անվտանգութեան, ասի՝ սենց ա վիճակը, այ լակոտներ, եկէք...:

Վահրամ Բաղդասարեան (ըստ ԱԱԾ-ի) - Աշխատում են:

«Ազատութիւն»ի հարցին, թէ նման խօսակցութիւն ունեցա՞ծ է Աշոտ Մինասեանի հետ, Վահրամ Բաղդասարեան պատասխանեց. «Եկէք մանրամասներին, դա քննչական, էսպէս ասած, հետաքննութեան....Նիկոլին խփելու համար եւ բաց կապով այդ գործողութիւնը մշակում եմ, որից յետոյ ասում եմ՝ 2-ին էգուց գնում ենք 17 կուսակցութիւնների հետ հաւաքուելու, էտտեղ էլ ասել ենք, թէ Նիկոլին ոնց ենք խփելու, դա անհեթեթութիւն է»:

ԼՈՒՐԵՐ

Օնիկ Գասպարեան. «Պէտք է Ընտրութիւն Կատարէինք Շատ Վատի Եւ Ողբերգութեան Միջեւ, Նախընտրած Ենք Շատ Վատը»

Հայաստանի Զինուած Ուժերու գլխաւոր շտապի պետը մանրամասնութիւններ ներկայացուցած է պատերազմի վերաբերեալ:

«Պէտք է ընտրութիւն կատարէինք շատ վատի եւ ողբերգութեան միջեւ, նախընտրել ենք շատ վատը», - յայտարարած է Հայաստանի Զինուած ուժերու գլխաւոր շտապի պետ՝ Օնիկ Գասպարեան այ Նոյեմբեր 17-ին հրապարակած ուղերձին մէջ:

«2020 թուականի Սեպտեմբեր 27-ից Ատրպէյճանի, նրա դաշնակից Թուրքիայի եւ ներգրաւուած վարձկան-ահաբեկիչների կողմից սանձազերծած պատերազմը հայկական զինուած ուժերն ընդունեցին պատուախնդրօրէն ու պատերազմի առաջին իսկ վայրկեաններից կատարեցին իրենցից կախուած հնարաւոր ու անհնարին ամէն ինչ: Հայ զինուորն անձնուիրաբար մարտնչեց, կենաց մահու կռիւ տուեց:

«Որոշ գործիչների կողմից մեղադրանքներ են հնչում, որ զինուած ուժերի ղեկավարութիւնը պետութեան ղեկավարին ոչ իրատեսական վերլուծութիւն է ներկայացրել հակառակորդի գործողութիւնների հաւանական բնոյթի եւ նրա զինուած ուժերի կարողութիւնների վերաբերեալ: Դա իրականութեանը չի՛Բ համապատասխանում:

«Կատարուած վերլուծութեան հիման վրայ ներկայացրել եմ առաջարկութիւններ պետութեան ռազմական անվտանգութեան աստիճանը բարձրացնելու ուղղութեամբ: Մասնաւորապէս նշել եմ, որ.

«1. Այլեւս մեր հակառակորդը միայն Ատրպէյճանը չէ, այլ նաեւ Թուրքիան: Հետեւաբար այդ պետութիւնների համահաւաք ռազմական ներուժին Հայաստանը չի կարող արդիւնաւէտ դիմակայել եւ անհրաժեշտ է քաղաքական ու դիւանագիտական ողջ ներուժը ուղղել պատերազմից խուսափելուն կամ գոնէ այն յետաձգելուն:

«2. Տրուած առաջարկը անվտանգութեան խորհրդի եւ վարչապետի կողմից ընդունուեց, սակայն հարցադրում արուեց՝ «Իսկ եթէ չյաջողուի պատերազմից խուսափել, ինչ պէտք է անենք»: Ես պատասխանեցի, որ մեզ պարտադրուած պատերազմում պէտք է փորձենք հնարաւորինս սեղմ ժամկէտներում հասցնենք հակառակորդին մեծ կորուստներ եւ ստիպենք հրաժարուել հետագայ գործողութիւններից: Նշել եմ, որ երկարատեւ պատերազմից պէտք է խուսափենք՝ հաշուի առնելով մեր պաշարների առկայութիւնը: Քննարկուել եւ հաւանութեան են արժանացել բազմաթիւ առաջարկներ, որոնց իրագործումը պէտք է զգալիօրէն բարձրացներ մեր մարտական ներուժը. դա վերաբերում էր եՔ սպառազինութեան ու ռազմական սարքերու ձեռքբերումներին, եՔ մարտական գործողութիւնների համակողմանի ապահովմանը:

«3. Այդ ժամանակ բարձրացուեց նաեւ հարիւր հազար կազմ ունեցող աշխարհազօրային միաւորումների կազմաւորման հարցը:

«Ինչեւէ, պատերազմից մենք չկարողացանք խուսափել եւ Սեպտեմբեր 27-ին թշնամին բազմակի անգամ գերազանցող ուժերով անցաւ լայնածաւալ յարձակման՝ Արցախի ողջ ճակատով: Պաշտպանութեան բանակը յաջողութեամբ յետ էր մղում նրա բոլոր գրոհները՝ հասցնելով մեծ կորուստներ, ոչնչացնելով մեծաքանակ կենդանի ուժ եւ զինամթերք: Յաւօք, նաեւ մեր զօրքերն էին կրում ծանր կորուստներ:

Զինուած ուժերու գլխաւոր շտապի պետ՝ Օնիկ Գասպարեան

«Պատերազմի չորրորդ օրը՝ անվտանգութեան խորհրդի նիստի ժամանակ ես ներկայացրեցի մեր կորուստները եւ ստեղծուած իրադրութեան վերաբերեալ զինուած ուժերի գնահատականը՝ նշելով, որ երկու-երեք օրուայ ընթացքում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել պատերազմը կանգնեցնելու համար, հակառակ դէպքում այս աշխուժութեամբ վարուող մարտական գործողութիւնների պարագայում մեր միջոցները սեղմ ժամկէտում կը սպառուեն եւ իւրաքանչիւր յաջորդ օրերի ընթացքում ունենալու ենք բանակցային գործընթացի համար աւելի ոչ բարենպաստ պայմաններ:

«Նմանատիպ գնահատականներ ես բազմաթիւ անգամ ներկայացրել եմ նաեւ վարչապետի հետ շուրջօրեայ աշխատանքի ընթացքում, ինչպէս նաեւ անվտանգութեան խորհրդի նիստերում:

«Պատերազմը որոշակի փուլում կանգնեցնելու բոլոր փորձերը եւ առաջարկութիւնները Թուրքիայի եւ Ատրպէյճանի կողմից մերժուել են եւ մենք պարտադրուած շարունակել ենք մարտական գործողութիւնները՝ փորձելով թշնամուն հասցնել մեծ կորուստներ ու ստիպել նստել բանակցային սեղանի շուրջ:

«Բոլորիս համար, շատ ծանր պայմաններով համաձայնագիրը, ընդունուել է իրօք իրադրութեան բազմակողմանի գնահատման արդիւնքում: Մենք պէտք է ընտրութիւն կատարէինք շատ վատի եւ ողբերգութեան միջեւ: Նախընտրել ենք շատ վատը:

«Այդ օրը իմ կեանքի վատագոյն օրն էր, ինձ համար անձնական ողբերգութիւն.

«Բայց գիտակցումը, որ այդ որոշման արդիւնքում յաջողուեց պահպանել Արցախի մեծ մասը եւ պաշտպանութեան բանակի հիմնական ռազմական ներուժը, ասում է, որ մենք ընկճուելու իրաւունք չունենք. պէՔտք է համախմբուել, արագ վերականգնուել եւ պատրաստուել պայքարը շարունակելուն»:

«Խոնարհում եմ գլուխս բոլոր նահատակների յիշատակի եւ նրանց հարազատների առջեւ: Մեզ պարտադրուեց շատ դաժան պատերազմ, եւ անհաւասար պայքարում Հայ զինուորն ու սպան ցոյց տուեցին մինչեւ վերջ կռուելու վճռականութիւն ու բարոյական մայրին ամենաբարձր որակներ:

Սա իսկական Հերոսամարտ եւ Գոյամարտ էր. Հայոց ազգը կարող է հպարտանալ իր զինուորով, սպայով ու զօրավարով», - կը յայտարարէ Օնիկ Գասպարեան:

Ղարաբաղեան Հակամարտութիւնը Պէտք է Կարգաւորուի Մինսքի Խումբի Ծիրէն Ներս, Կը Շեշտէ Փոմփէյոն

Ղարաբաղեան հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի ԵԱՀԿ Մինսքի խումբի ծիրէն ներս, յայտարարած է Միացեալ Նահանգներու պետական քարտուղար՝ Մայք Փոմփէյոն ֆրանսական Le Figaro օրաթերթին հետ զրոյցի ընթացքին: Նախօրէին ամերիկեան դիւանագիտութեան ղեկավարը ֆրանսական մայրաքաղաքն էր, ուր հանդիպումներ ունեցած է նախագահ՝ Էմմանուէլ Մաքրոնի եւ արտաքին գործոց նախարար՝ Ժան-Իվ Լը Տրիանի հետ:

«Միացեալ Նահանգները Ֆրանսայի եւ Ռուսաստանի հետ կը հանդիսանան Մինսքի խումբի համանախագահներ, որու գլխաւոր նպատակը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորումն է: Այդ շրջանակներուն մէջ պէտք է կարգաւորուի իրավիճակը», - Le Figaro-ի հետ զրոյցի ենթացքին շեշտած է Փոմփէյոն: Պետական քարտուղարը յատուկ ընդգծած է, որ Ուաշինկթընն մտահոգուած է Թուրքիոյ ռազմական ներուժի աճի կապակցութեամբ:

«Նախագահ Էմմանուէլ Մաքրոնը եւ ես համակարծիք ենք, որ Թուրքիոյ վերջին գործողութիւնները թշնամական էին», - ըսած է պետական քարտուղարը՝ մատնացոյց ընելով ղարաբաղեան հակամարտութեան մէջ Թուրքիոյ աջակցութիւնը Ատրպէյճանին, ինչպէս նաեւ Անգարայի ռազմական գործողութիւնները Լիպիոյ եւ Միջերկրական ծովին մէջ:

«Եւրոպան եւ Միացեալ Նահանգները պէտք է համատեղ աշխատին՝ համոզելու Էրտողանը, որ նման քայլերը չեն բխիր իր ժողովուրդի շահերէն», - ըսած է ամերիկեան դիւանագիտութեան ղեկավարը:

Միացեալ Նահանգներու պետական քարտուղար՝ Մայք Փոմփէօ

Փարիզի մէջ ֆրանսական իշխանութիւններու հետ քննարկումներու մասին յաւելեալ մանրամասնութիւններ պատմած են ամերիկեան Պետական քարտուղարութեան բարձրաստիճան պաշտօնեաները: Լրագրողներու հետ հարցուպատասխանի սղագրութիւնը հրապարակուած է ԱՄՆ Պետական գրասենեակի պաշտօնական կայքէջով:

Աղբիւրի համաձայն՝ Փոմփէյոն Մաքրոնի եւ Լը Տրիանի հետ մանրակրկիտ քննարկումներ ունեցած է Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ: Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման միջնորդներ՝ Փարիզն ու Ուաշինկթընը Մոսկուայէն աւելի շատ յստակութիւն կ՛ակնկալեն Ղարաբաղի մէջ հաստատուած հրադադարի եւ պայմանաւորուածութիւններու, ինչպէս նաեւ այդ գործընթացին Անգարայի դերակատարութեան վերաբերեալ:

Արտաքին Գործոց Նախարարին Պաշտօնէն Ազատելու Որոշում Կայացուցած է

Որոշում կայացուցած է արտաքին գործոց նախարարին պաշտօնէն ազատելու մասին: Այդ մասին Նիկոլ Փաշինեան յայտարարեց այսօր՝ Նոյեմբեր 16-ին Ազգային ժողովէն ներս՝ պատասխանելով պատգամաւորներու հարցերուն:

Յայտարարութենէն բոպէներ անց Արտաքին գործոց նախարարութեան մամլոյ քարտուղար՝ Աննա Նաղտալեան դիմատետրի գրառմամբ տեղեկացուց, որ Զօհրապ Մնացականեան հրաժարականի դիմում ներկայացուցած է:

Զօհրապ Մնացականեան Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավար նշանակուած է Թաւշեայ յեղափոխութենէն յետոյ՝ 2018 թուականի Մայիս 12-ին:

Հրաժարական Ներկայացուցած է Նախարար Ֆելիքս Ցոլակեանը

Հրաժարական ներկայացուցած է Արտակարգ Իրավիճակներու նախարար Ֆելիքս Ցոլակեան:

2018-էն սկսեալ Արտակարգ Իրավիճակներու նախարարութիւնը գլխաւորող Ցոլակեանը Նոյեմբեր 17-ին դիմաւորելով սահմաններէն վերադարձող ԱԻՆ փրկարարներուն յայտարարած է, որ իր ձեռքերը արդէն ազատ են:

Ցոլակեան Փաշինեանի գլխաւորած կառավարութեան երկրորդ նախարարն է, որ կը հեռանայ Արցախի պատերազմի դադարեցումը հաստատող Նոյեմբեր 9-ին ստորագրուած յայտարարութիւնէն յետոյ:

Ստեփանակերտի Ու Արցախի Միւս Քաղաքներուն եւ Գիւղերուն Մէջ Կեանքը Կը Մտնէ Հունի Մէջ

Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը

«Ազատութիւն» ռատիոկայանի թղթակիցը Արցախէն կը տեղեկացնէ որ, Արցախի երկու տարբեր գործընթացներուն ականատես եղած էր. մէկ կողմէն Վարդենիս-Քարվաճառ ճանապարհին կարելի էր տեսնել բազմաթիւ արցախցիներ, որոնք Հայաստանէն կը վերադառնային Լեռնային Ղարաբաղ՝ իրենց իրերը բարձած մարդատար եւ բեռնատար ինքնաշարժերու վրայ, միւս կողմէն Քելբաջարի շրջանը, որ պէտք է վերադարձուի Ատրպէյճանին, ինչպէս նշուած է Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու համատեղ յայտարարութեան մէջ, այդ ողջ ճանապարհին կարելի էր տեսնել բազմաթիւ տուներ, կառոյցներ, զորս հայերը թողած կը հեռանային, տուներու մէկ մասը հրդեհուած էր: Կարելի էր տեսնել քանի մը ՀԷԿ-երը,որոնց մէջէն սարքաւորումները հանուած էին, այնուհետեւ հրկիզուած էին:

Իսկ երբ մուտք կը գործես Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ՝ Խորհրդային Միութեան տարիներուն դեռ գոյութիւն ունեցած ԼՂԻՄ-ի վարչական սահմանը, այն շրջանները, որոնք պիտի մնան Արցախի կազմէն ներս, այդտեղ՝ քաղաքներուն եւ գիւղերուն մէջ կեանքը աստիճանաբար կը վերականգնուի, Ստեփանակերտի փողոցները մարդոց կարելի է հանդիպիլ, խանութները կ՛աշխատին եւ կեանքը աստիճանաբար կը մտնէ հունի մէջ:

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Յայտարարութիւնը

Շարունակուած էջ 1-էն

Միանշանակ է, որ դէպքերու այս աղէտալի ընթացքի ու զարգացումներու ամբողջական պատասխանատուութիւնը կը կրէ ներկայ կառավարութիւնը, որ երբ պահը գայ հաշուետու կը դառնայ ժողովուրդի կամքին: Սակայն, որքան ալ դառն ըլլայ հայ քաջարի զինուորի ու ազատամարտիկի արեան գնով ազատագրուած տարածքներու կորուստը, ստեղծուած իրավիճակը կը պարտադրէ մեզ ըլլալ խոհեմ, կշռադատուած եւ իրապաշտ:

Հասկնալի է ժողովուրդին վրդովմունքը եւ յուսախաբութիւնը ի տես այս անսպասելի շրջադարձին, սակայն անընդունելի եւ դատապարտելի է ստեղծուած ծանր իրավիճակի շահարկումը՝ յանուն քաղաքական յետին նպատակներու, որ ոչ միայն կ՛ապակայունացնէ երկիրը, այլ ալ աւելի կը թուլացնէ մեր պետականութիւնը: Վերջ ի վերջոյ, պիտի գիտակցինք, որ պատերազմը դեռ աւարտին հասած չէ եւ իրաւունքը չունինք թշնամիին հետ բանակցային սեղան նստելու ջլատուած ու պառակտուած:

Միւս կողմէ, մեր առջեւ ծառացած են բազում ծանր մարտահրաւէրներ, սկսեալ պատերազմի պատճառած մարդկային եւ նիւթական հսկայական վնասներու դարմանումի աշխատանքներէն մինչեւ նոր գաղթականական ճգնաժամի յաղթահարումը: Իսկ այս բոլորը պիտի կարօտին երկարամեայ հետեւողական եւ տիտանական աշխատանքի, որ անհնար պիտի ըլլայ իրականացնել առանց միասնականութեան եւ հաւաքական կարողականութեան գերլարումի:

Ի տես այս բոլորին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը կոչ կ՛ուղղէ մեր հայրենակիցներուն հեռու մնալու իրավիճակը սրող ծայրայեղ քայլերէ:

Կոչ կ՛ուղղենք նաեւ իշխանութիւններուն ցուցաբերելու առաւելագոյն զսպուածութիւն եւ հանդուրժողականութիւն՝ իրենց խօսքի ազատութեան իրաւունքէն օգտուող քաղաքացիներու նկատմամբ, գործելու բացառապէս ժողովրդավարական սկզբունքներու համաձայն եւ միջոցներ ձեռք առնելու մեղմելու համար առկայ շիկացած մթնոլորտը:

Պահը օրհասական է ու Հայաստանի եւ Արցախի ապագան կը պարտադրէ բոլորիս ըլլալ զգօն, որպէսզի նուազագոյն ցնցումներով դուրս գանք ներկայ վտանգաւոր իրավիճակէն ու ազգովին լծուինք մեր ցաւերը ամոքելու եւ Հայրենիքը վերականգնելու երկարաշունչ աշխատանքին:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան
Կեդրոնական Վարչութիւն
11-11-2020

Կայացած է Մաքրոն-Փաշինեան Հերթական Հեռախօսազրոյցը

Նոյեմբեր 13-ին կայացած է Հայաստանի վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանի եւ Ֆրանսայի նախագահ՝ Էմմանուէլ Մաքրոնի հեռախօսազրոյցը:

Մաքրոն տեղեկացուցած է նոյն օրը Էլիզէ պալատին մէջ Ֆրանսայի մարդասիրական ջանքերը միաւորելու ուղղուած՝ իր կողմէ հրաւիրուած ժողովի մասին:

«Նախագահը իր գոհունակութիւնը յայտնած է մարտերու դադրեցման կապակցութեամբ եւ վերահաստատած է իր բարեկամութիւնը Հայաստանի եւ հայ ժողովուրդի նկատմամբ, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի բոլոր կողմերու համար արդար, կայուն եւ ընդունելի քաղաքական լուծում կառուցելու իր պատրաստակամութիւնը», - ըսուած է Էլիզէ պալատի հաղորդագրութեան մէջ, զոր տարածած է Հայաստանի մօտ Ֆրանսայի դեսպանատունը:

Մահացաւ Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարը

Սուրիոյ պետական հեռուստակայանը գուժեց մահը երկրի արտաքին գործոց նախարար Ուալիտ էլ Մուալլէմի: Սուրիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական բանբերին համաձայն՝ Ուալիտ էլ Մուալլէմի մահը պատահած է Նոյեմբերի 16ին, առաւօտեան ժամերուն: Հանգուցեալը կը վարէր նաեւ փոխվարչապետի պաշտօնը:

Ուալիտ էլ Մուալլէմ ծնած է 1941, Յունուար 13ին: Ան անդամ էր իշխող Պաաս կուսակցութեան: 2006 թուականէն ի վեր կը վարէր արտաքին գործոց նախարարի պաշտօնը: 2012էն մինչեւ 2020 ստանձնած էր փոխ-վարչապետի պաշտօնը: Նախապէս եղած է Սուրիոյ դեսպանը տարբեր երկիրներու մէջ: Սուրիոյ անունով բանակցային հանդիպումներ ունեցած է Իսրայէլի հետ: Բուռն հակառակող մըն էր Թուրքիոյ Ֆրանսայի Սէուտական Արաբիոյ, Քաթարի եւ ԱՄՆ-ի:

Նախագահ Արմէն Սարգսեան Կ՛առաջարկէ

Շարունակուած էջ 1-էն

սահմանադրական գործընթացների նախաձեռնման ժամկէտները, որոնց արդիւնքում հնարաւոր կը դառնայ իրականացնել Ազգային Ժողովի արտահերթ ընտրութիւններ, իսկ մինչ այդ կառավարումը կը յանձնուի բարձր որակաւորում ունեցող Ազգային համաձայնութեան կառավարութեանը», - ըսաւ Արմէն Սարգսեան իր ուղերձին մէջ:

Նախագահ Սարգսեանի այս տեսակէտի մասին առ այժմ պատասխան հնչեց ո՛չ Վարչապետին կողմէ ե՛ւ ոչ ալ խորհրդարանական մեծամասնութիւն կազմող՝ «Իմ Քայլը խմբակցութեան պատգամաւորներուն կողմէ:

Փութինի Համաձայն Ստեղծուած Են Պայմաններ

Շարունակուած էջ 1-էն

յաստանի վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանի երէկուայ յայտարարութիւնը այն մասին, որ այսօր Հայաստանի իշխանութիւններու օրակարգին վրայ Ղարաբաղի միջազգային ճանաչման հարցն է:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը ընդհանրապէս որեւէ բան չէ ըսած Ղարաբաղի կարգավիճակի մասին, միայն ըսած է այն, որ Ռուսաստանը պատասխան կու տայ այն համաձայնագրի համար, որ ստորագրուած է, եւ այն կէտերուն համար, որոնք այդ յայտարարութեան մէջ կան: Յիշեցնենք, որ համաձայնագրին մէջ կարգավիճակի մասին որեւէ բառ չկայ:

Ինչ կը վերաբերի համաձայնագրին ընդհանրապէս, Լաւրով ըսած էգ «Մենք պատասխանատու ենք, ես իմ խօսքերուն համար պատասխան կու տամ, մենք այս պահուն չենք տեսներ այդ յայտարարութիւնը վերանայելու եւ խմբագրելու փորձեր»:

Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան գերատեսչութեան ղեկավարի խօսքով՝ Մոսկուայի մէջ կը տեսնեն, որ Հայաստանի մէջ այսօր բարդ ներքաղաքական իրավիճակ է, սակայն ընդդիմութեան 16 կուսակցութիւնները, Լաւրովի խօսքով, այսօր կը յայտարարեն, որ չեն պատրաստուիր չեղեալ նկատել այդ յայտարարութիւնը:

Ինչ կը վերաբերի փախստականներուն եւ հայկական զօրքերու մասին Ատրպէյճանցի լրագրողի հարցին, Լաւրով չեշտած է. «Ատրպէյճանցի եւ հայ փախստականները պէտք է վերադառնան իրենց աւանդական բնակութեան վայրեր»: Լաւրովի խօսքով՝ ե?ւ փախստականներուն եւ հայկական զօրքերու դուրս հանելու մասին համաձայնագիրին մէջ յստակ գրուած է, եւ այս ամէնուն շուրջ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի ղեկավարները յստակ պայմանաւորուած են:

Աւելցնենք, որ Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւ այսօր յայտարարած է, թէ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին խօսք ընել չի կրնար:

www.massisweekly.com

Դարձեալ «Լրջանալու Պահը»

ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Շատ անգամներ գրած ենք պատմութիւնէն դասեր քաղելու անհրաժեշտութեան մասին, բերելով օրինակներ հայ թէ օտար պատմութիւնէն եւ պատշաճեցնելով զանոնք մերօրեայ անցուդարձերուն: Այս յօդուածով հեռուն պիտի չ'երթանք: Միայն 23 տարիներ, եւ կարճ բայց 20 արտապումներ կատարելով Հայաստանի Ա. նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեանի Սեպտեմբեր 26, 1997-ի մամլոյ ասուլիսէն, ատոր յաջորդած՝ «Պատերազմ, Թէ՞ Խաղաղութիւն. Լրջանալու Պահը» յօդուածէն եւ Փետրուար 3, 1998-ի իր հրաժարականի խօսքէն: Ապա պիտի տանք մեր հակիրճ խորհրդածութիւնները, եզրակացութիւնները վերապահելով ընթերցողին:

Յաջորդ սերնդի եւ յաջորդ բոլոր սերունդների գաղափարախօսութիւնը պէտք է լինի մեր պետականութեան ամրապնդումը, մեր ժողովրդի բարգաւաճումը եւ մեր երկրի ծաղկումը:

Մենք պէտք է ձգտենք խաղաղութեան, բայց խաղաղութեան ձգտելու ամենահիմնական կռուաններից մէկն էլ բանակի հզօրութիւնն է, ռազմական ուժը, որը ես դիտում եմ ոչ թէ որպէս պատերազմի գործօն, այլ՝ խաղաղութեան գործօն:

Այո, ես գտնում եմ, եթէ ազգը չի կարողանում ճիշդ գնահատել իր ուժերը, ոչ միայն ազգը, այլեւ մարդը, այդ ազգն ու այդ մարդը կարող են մատնուել խայտառակ վիճակների, ինչպէս մենք տեսնում ենք ամէն քայլափոխի:

Մեր հաշուումներով, վերջին հինգ տարիների ընթացքում, Ատրպէյճանը ստացել է կրկնակի, եռակի անգամ աւելի շատ զէնք, տեխնիկա եւ զինամթերք, քան Հայաստանը: Անցած պատերազմների ընթացքում Ատրպէյճանը իր այդ ձեռք բերած տեխնիկայի, զինամթերքի, զէնքի հիմնական մասը սպառել է, մաշեցրել է: Այսօր ես գտնում եմ, կայ հաւասարակշռութիւն, եւ եթէ այդպէս չլինէր, եթէ Ատրպէյճանը այսօր էլ ունենար այդ կրկնակի գերակշռութիւնը, վստահ եմ, նա վաղուց պատերազմի վերսկսած կը լինէր:

Եթէ դուք մտածում էք, որ այս պայմաններում, Ղարաբաղի հարցի չլուծուածութեան պայմանում առաջին հերթին, շրջափակումների պայմաններում Հայաստանը կարող է դառնալ նորմալ երկիր, Հայաստանի ժողովուրդը կարող է ապրել այնպէս, ինչպէս Եւրոպայի ժողովուրդներն են ապրում, դա նշանակում է դուք Խորենացի չէք կարդացել:

Ի՞նչ է միջազգային հանրութիւնը թոյլ է տալու, որ 20 կամ 30 տարի պահպանուի՝ այս վիճակը: Սա բացառուած է եւ միջազգային հանրութիւնը կը գտնի ձեւեր, միջոցներ այնքան խեղճացնելու մեզ, որ ոչ միայն չկարողանանք ձեռք բերել այն ինչ որ այսօր կարող ենք ձեռք բերել փոխզիջումների ճանապարհով, այլ շատ աւելի վատ վիճակի մէջ ընկնել:

Փաթեթային (լուծումը) ենթադրում էր, որ միաժամանակ լուծւում են եւ գրաւուած տարածքների վերադարձման հարցը, բացի Լաչինի շրջանից եւ խաղաղարար ուժերի տեղադրումը ղարաբաղա-ատրպէյճանական սահմանին, եւ շրջափակումների վերացումը, եւ փախստականների վերադարձը իրենց բնակավայրերը, եւ բուֆերային ու անջատիչ, ոչ թռիչքային գօտիների ստեղծումը Ղարաբաղի ու Ատրպէյճանի սահմանում: Դրանք չափազանց լայն գօտիներ են: Սա փաթեթային լուծման մի մասն էր: Միւս մասը Ղարաբաղի կարգավիճակի ճշդումն է: Սա լուծման մէկ մեթոդոլոգիան է եւ, կրկնում եմ, գաղտնիք չեմ բացի, եթէ ասեմ, որ առաջին անգամ համանախագահները ներկայացրել էին նման փաթեթային լուծման ծրագիր: Առաջին մասի նկատմամբ, ըստ էութեան, ոչ ոք լուրջ տարաձայնութիւններ չունէր, երկրորդը՝ կարգավիճակը, կտրականապէս մերժելի էր Ղարաբաղի համար եւ նոյնքան կտրականապէս մերժուեց Ատրպէյճանի կողմից:

"Yes, these are difficult times for all us. Our unity is more crucial than ever. Just a week ago we were together, from Madagascar to Buenos Aires, from Sydney to Stockholm. Before you all think we were defeated and became hopeless, I want you to be proud because we were one nation all over the world. We were stronger than ever before. I had never seen so much love and effort to help our homeland. We were strong and powerful and that is something that can never be defeated. That is victory brothers and sisters!" Hovagimian proclaimed.

"All of us are heartbroken, sad and angry, but we cannot stop now and we cannot quit now. We must be united more than ever. I am begging you my brothers and sisters, begging you to do your best to unite despite our differing opinions…Let us come together and be united," he added.

NATIONAL NOTARY ASSOCIATION MEMBER
NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC
Garine Depoyan
626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

Տիգրան Սարաֆեան՝ Համերաշխասէր Գաղափարական Ազգային Գործիչը

ՍԱՐԳԻՍ ՆԱՃԱՐԵԱՆ

Ծանօթ ենք որպէս իրեն նուիրեալները, իրեն անձնուրաց ծառայողները գնահատել ու մեծարել գիտցող ժողովուրդ: Դժբախտաբար սակայն, հանգամանքներու բերումով, այդ գնահատանքը յաճախ կ'ուշանայ, երբեմն տեղի կ'ունենայ անոնց՝ այս աշխարհին վերջին հրաժեշտին առիթով, երբեմն յետմահու: Բայց բոլոր պարագաներու տակ, ոչ միայն անոնց յիշատակը պարզապէս, այլ կատարած գործը եւ ազգին, հայրենիքին, հասարակութեան կամ սոսկ միութեան մը մատուցած անձնուրաց ծառայութեան օրինակը ընդմիշտ դրոշմուած կը մնայ սերունդներու մտքին ու հոգիին մէջ: Այդ օրինակը կրնայ նոյնիսկ ուղեցոյց դառնալ յաջորդներուն:

Ափսոս որ հանգամանքները արգելք եղան յաջորդող սերունդներու ներկայացուցիչներուն մօտէն եւ ըստ արժանւոյն ծանօթանալու եւ գնահատելու Տիգրան Սարաֆեանի նմանները: Ուրախալի էր որ այս բացը մասամբ գոցելու ծառայեց Տիգրան Սարաֆեանի մեծարանքի հանդիսութիւնը, որ տեղի ունեցաւ 2014-ին, անոր Պէյրութ այցելութեան առթիւ: Վեց տարի ետք ոչ եւս է ան, ֆիզիքապէս, սակայն անոր յիշատակը յաւերժացնող օրինակը անջնջելի է: Փոխուած են ժամանակները եւ հանգամանքները: Այսուհանդերձ, պէտք է յուսալ, որ կը գտնուին, պիտի՛ գտնուին, պէ՛տք է գտնուին Տիգրան Սարաֆեանին օրինակով գործելու եւ առաջնորդուելու գաղափարի նուիրեալներ:

Տիգրան Սարաֆեանի մահուան գոյժը որ ստացայ 7 Հոկտեմբերին, այսպիսի խորհրդածութիւններու առիթ եղաւ, երբ պարտաւորութիւնը զգացի անդրադառնալու անոր կեանքի գլխաւոր փուլերուն եւ այս նպատակով նստեցայ համակարգիչիս դիմաց:

Բայց, երբ համակարգիչիս դիմաց նստեցայ թուղթին յանձնելու համար վաղեմի ընկերոջս հետ ապրածս տարիներու դրուագներ, զգացի որ այնքան ալ հեշտ չէ մամուլի քանի մը սիւնակներու մէջ ամփոփել ամբողջ կեանք մը գաղափարի մը եւ անոր ճամբով ազգին եւ հայրենիքին ծառայութեան նուիրած մարդու մը վաստակը, որուն վկաներուն շարքերը ցաւալիօրէն նօսրացած են, իսկ ասոնց յաջորդած միջին կամ նոր սերունդի ներկայացուցիչներէն շատեր ոչ ինծի չափ գիտեն անշուշտ, բայց նուազագոյնը իմացած պիտի ըլլան անոր վաստակի մասին:

Թող վկայութիւններս թարմացնեն առաջիններուն յուշերը, իսկ մղեն վերջիններս ծանօթանալ փորձելու իրենց միութեան մօտիկ անցեալի եղելութեանց գլխաւոր դերակատարներէն մէկուն՝ Տիգրան Սարաֆեանի գաղափարանուէր ու միութենանուէր գործունէութեան:

Այս իրականութեան պատճառներէն մէկը, եթէ ոչ գլխաւորը, այն հսկայ բացն է, որ դժբախտաբար, գոյացաւ Լիբանանի քաղաքացիական պատերազմին նախորդող ու պատերազմը ապրած սերունդին եւ յետպատերազմեան սերունդին միջեւ:

Այս բացը դարմանելու սահմանուած ձեռնարկներն ու փորձերը երբեք բաւարար պիտի չըլլան արդար գնահատանքի արժանացնելու համար մարդիկ, որոնք այս գաղութի լաւ ու փոթորկալի կեանքին դերակատարները եղան տասնեակ տարիներ:

Գնահատել Տիգրան Սարաֆեանին վաստակը եւ մեծարել զինք պիտի նշանակէր – վստահ եմ որ ինքն ալ համաձայն պիտի ըլլար ինծի – իր անձին ընդմէջէն գնահատել ու մեծարել իրեն ժամանակակից եւ նոյնիսկ իրեն նախորդող ազգային, միութենական, հասարակական ծառայութեան նուիրեալներու ամբողջ սերունդ մը, իր նախորդները ըլլալով իրենց օրինակով՝ զինք ՀՄՄ-ի եւ ՀՄՄ-ի ընդմէջէն համայն հայութեան, մայր եւ որդեգիր հայրենիքներուն հանդէպ սիրով եւ նուիրուելու պատրաստակամութեամբ վարակողները, իսկ իր ժամանակակիցները՝ իր գործակիցները: Սակայն նման գնահատանք կատարելու փորձ մը շատ աւելի խոր մօտեցումի կը կարօտի: Նման փորձ մը կատարելու մասին մտածելն անգամ կը յուզէ զիս եւ վստահ եմ որ պիտի յուզէ այսօր արդէն 93-ամեայ ընկեր Տիգրանը հեռուէն, բայց մանաւանդ մօտէն բոլոր ճանչցողները, որովհետեւ այդ փորձը մեզի պիտի յիշեցնէ վաստակը Մինաս Զաւուշի մը, Բիւզանդ Մելքոնեանի մը, Աստուր Կիւլվարդեանի, Լեւոն Գուտուզեանի, Սարգիս Գիւբէյլեանի, Սարգիս Շխըրտմեանի, Հայկարամ Գալինճեանի, Գրիգոր Լաջինեանի, Սարգիս Սարգիսեանի եւ դեռ բազմաթիւ ուրիշներու նման տիպարներու, որոնք ճանչցած ենք եւ որոնք իրենց կատարած նուիրեալ աշխատանքին համար մեծարուելու բախտը չունեցան:

Տիգրան Սարաֆեանին վաստակը շատ լայնածիր է, որովհետեւ Հայ Մարմնամարզական Միութիւնը, որուն յառաջապահ դրօշակակիրներէն մէկը եղաւ ան, այն ալ քսան տարի անընդմէջ, մինչեւ 1981, այնուհետեւ ալ մինչեւ 2002՝ որպէս ՀՄՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ, այդ ՀՄՄ-ը իր տեղն ու դերը ունեցած է ընդհանրապէս լիբանանահայութեան եւ մասնաւորաբար անոր համարեայ բոլոր մարզերէն ներս կազմաւորման ու գոյերթին պատմութեան մէջ: Որովհետեւ, ՀՄՄ-ի ղեկավար ըլլալ նշանակած է ինքնաբերաբար ընդգրկուիլ այդ բոլոր մարզերէն ներս՝ սկսեալ անշուշտ մարզականէն, եւ սակայն մարզականի պիտակին տակ՝ տարածուելով ազգային, քաղաքական, կուսակցական, մշակութային եւ ասոնց յարակից բոլոր մարզերուն: Այդպէս եղած է գէթ մինչեւ վերջին երեք տասնամեակներուն, որուն երկուքին մասնաւորապէս մարզական եւ ընդհանրապէս միութենական, ազգային-կուսակցական դերակատարներէն մէկը եղած է Տիգրան Սարաֆեանը: Ան՝ ՀՄՄ-ի Հալէպի փառահեղ սկաուտութեան աստիճաններէն բարձրանալով՝ 1960-ական տարիներուն Լիբանանի մէջ հասած է Միութեան ղեկավարի պաշտօնին, որուն զուգահեռ եղած է Հնչակեան կուսակցութեան Լիբանանի ղեկավար մարմինի՝ Վարիչ Մարմինի անդամ, անոր ներքին դիւանի վարիչ՝ այն ալ

1975-ի լիբանանեան պատերազմի սկզբնաւորութեան յաջորդող փոթորկալի տարիներուն: Այնուհետեւ նոյնիսկ կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ՝ 1985-1990 տարիներուն:

Ներքին դիւանի վարիչ ըլլալ 1975-ին, երբ կը պայթէր քաղաքացիական պատերազմը երկրին մէջ, ընթացիկ կամ սովորական պաշտօն մը չէր, որ խաղաղ օրերուն հրապուրիչ ալ կրնար ըլլալ: Այս իրողութիւնը հաստատելու համար, պիտի գոհանամ յիշատակելով միայն գաղութին համար այն փրկարար դերը, որ այդ օրերուն ստեղծուած միջկուսակցական համակարգիչ մարմինը խաղցաւ՝ դրական չէզոքութեան քաղաքականութեան կիրարկումին շնորհիւ՝ հայկական անխտիր բոլոր շրջանակներէն ներս համախոհութեան ու համերաշխութեան մթնոլորտի ստեղծումին մէջ, ապա նաեւ համալիբանանեան չափանիշով:

Իսկ վեցանդամ այդ մարմինէն ներս տիրական ներկայութիւն էր Տիգրան Սարաֆեանը իբրեւ Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչ, վայելելով միւս կուսակցութիւններու ներկայացուցիչներուն վստահութիւնն ու յարգանքը:

Ըլլալով «Արարատ» օրաթերթի երբեմնի խմբագիր, չեմ կրնար չյիշել նաեւ «Արարատ»ի վաստակաւոր տնօրէն Օննիկ Ճամպուլեանին խնդրանքով՝ օրաթերթին Հալէպի եւ Դամասկոսի մէջ տարածումին ի խնդիր Տիգրան Սարաֆեանին կատարած արդիւնաշատ աշխատանքը 1981-ին:

Չեմ կրնար չյիշել Տիգրան Սարաֆեանին եւ, արդար ըլլալու համար, նաեւ անոր գործակիցներուն հեռատես ու շրջահայեաց միջամտութիւնները՝ լիբանանեան մարզական կեանքը եւ յատկապէս մարզական պաշտօնական մարմինները կամ այսպէս կոչուած ֆեդերասիոնները, մասնաւորաբար ֆութպոլի ֆեդերասիոնը քաղաքականացնող սադրանքներու ու գաճուճ հաշիւներու հետեւանքներէն իրենց միութիւնը զերծ պահելու համար:

Չեմ կրնար չյիշել ՀՄՄ-ը դէպի Մայր Հայրենիք՝ Հայաստան նետուած կամուրջ դարձնելու անոր աշխատանքը, որ նուիրագործուեցաւ ՀՄՄ-ի յիսնամեակի հանդիսաւոր նշումով Սփիւռքի Հետ Մշակութային Կոմիտէի դահլիճին մէջ: ՀՄՄ եղաւ սփիւռքահայ առաջին միութիւնը, որուն յոբելեանը պաշտօնապէս կը նշուէր Հայաստանի մէջ, 1971-ին:

Չեմ կրնար չյիշել ՀՄՄ-ով խանդավառ համակիրներու – հայ եւ արաբ – շրջանակը ընդարձակելու աշխատանքը, որուն բարերար արդիւնքը զգացի անձնապէս ես, երբ 1984-ի Օգոստոս 19-ին չարագործ ձեռքերու կողմէ այս ակումբի ականահարումէն ետք անոր վերաշինութեան համար դրամահաւաքի ձեռնարկեցի անզուգական ֆութպոլիստ, նոյնքան անզուգական ՀՄՄ-ական Մարտիկին հետ:

ՀՄՄ-ի կեանքին մէջ Տիգրան Սարաֆեանին հետ առնչուած յիշարժան եղելութիւններուն շարքը երկար է:

Բայց, այս բոլորով հանդերձ, ինչպէս տեղի կ'ունենայ ընդհանրապէս հայկական իրականութենէն եւ ժողովրդավարական սկզբունքով գործող կառոյցներէն ներս, Տիգրան Սարաֆեան ունեցաւ իր ընդդիմախօսները: Բայց կրնամ վստահեցնել, որ տարակարծութիւնները նպատակին շուրջ չեղան երբեք, այլ՝ գործելաոճին: Որովհետեւ նպատակը հիմնուած էր Հնչակեան Քսան նահատակ հերոսներուն կողմէ շուրջ դար մը առաջ պատգամուած այն ազգային գաղափարախօսութեան վրայ, որուն հաւատարիմ ծառայողներէն էին թէ՛ Տիգրան Սարաֆեանը եւ թէ՛ իրեն ընդդիմախօսները: Բոլո՛րը, հաւասարապէս, հաւատարիմ էին ՀՄՄ-ի կոչումին՝ դարբնելու Քսաններուն յաջորդող քսան հազարներու բանակին յառաջապահ ուժը:

Բոլո՛րը, անխտիր բոլո՛րը, հաւատարիմ էին ՀՄՄ-ի առաքելութեան մարզական թէ երիտասարդական, մշակութային թէ բարեսիրական միութիւններու ճամբով նորահաս սերունդներուն մօտ վառ պահելու իրենց ինքնութեան գիտակցութիւնը եւ այդ գիտակցութենէն թելադրուած ազգային ապրումներն ու ոգին: Մեր ժողովուրդի զրկանքներէն, տառապանքէն ու նահատակութենէն ծնունդ առած գաղափարախօսութեան հաւատարմութիւն ուխտած գործիչներ էին բոլորը:

Չեմ կրնար յարգանքով չյիշել նաեւ այդ գործիչներու կողքին կանգնած իգական սեռի մեր աննման ներկայացուցիչները, մայրերն ու կիները, ինչպիսին եղաւ տիկին Վարդուհին՝ իր ամուսնոյն կողքին, տունէն անոր յաճախակի բացակայութիւններուն իր հանդուրժողութեամբ եւ համբերութեամբ մանաւանդ:

Շար.ը էջ 15

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը Հանդէս Եկաւ Յայտարարութեամբ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ՝ Գերագոյն հոգեւոր խորհուրդը, անդրադարձ կատարելով Հայաստանում եւ Արցախում յետպատերազմեան իրավիճակին, հանդէս եկաւ յայտարարութեամբ:

« 1. Վերջին շաբաթներին, Արցախի դէմ Ադրբեջանի, Թուրքիայի եւ միջազգային ահաբեկչական ցանցերի կողմց սանձազերծուած պատերազմական գործողութիւնների պայմաններում, մեր հաւատաւոր ժողովուրդը հայրենիքում եւ սփիւռքում ապրեց անհուն ցաւով եւ աղօթքով առ Աստուած՝ ուժերի ներածին չափով ջանալով աջակցել արցախահայութեանը, Արցախի Պաշտպանութեան բանակին եւ ի լուր աշխարհի բարձրաձայնել Արցախի ազատ ու անկախ կեանքի իրաւունքի մասին՝ շարունակելով ապաւինել մեր զինուորի յաղթական ոգուն:

2. Անվիճարկելի ու կենսական է հրադադարի պահպանումը եւ տարածաշրջանում տեւական ու յուսալի խաղաղութեան ապահովումը: Այնուամենայնիւ, հրադադարի վերաբերեալ Նոյեմբեր 10-ի եռակողմ յայտարարութիւնը, դրանից բխող հետեւանքները եւ առկայ անորոշութիւնները, Արցախի մի հատուածի կորստի փաստը յանկարծակիի բերեցին հանրութեանը՝ յանգեցնելով արդար ընդվզման, ինչն իր հերթին յղի է մեր երկրի ներքաղաքական ապակայունացմամբ եւ սպառնում է կանգնեցնել հայրենիքը նոր վտանգների առջեւ:

3. Այս օրերին կոչուած ենք տուրք չտալ մեր զգացմունքներին եւ առաջնային կերպով երախտիքի բացառիկ դրսեւորմամբ յարգել յիշատակը մեր հերոս զաւակների, որոնք իրենց կեանքն ընծայեցին յանուն մեր հայրենիքի, եւ զօրակցել նրանց ընտանիքներին ու մեր ողջ ժողովրդին, ինչպէս նաեւ պատշաճ կերպով դիմաւորել 44 օր շարունակ, ի գին ամէն զրկանքի, հերոսական մարտեր մղած քաջարի մարտիկներին:

4. Անցնող այս ժամանակահատուածում կայացուած որոշումների, հակամարտութեան այսօրինակ յանգուցալուծման եւ ազգային համերաշխութեան վերականգնման համար, միմիայն օրինականութեան նկատմամբ անվերապահ յարգանքով, պէտք է պատասխանատուութիւն կրեն բոլոր պատկան մարմինների իրաւասու պաշտօնեաները՝ չբացառելով նաեւ հրաժարականների հաւանականութիւնը:

5. Ցարկ է պահպանել իրաւունքի գերակայութիւնը եւ քաղաքական բոլոր գործընթացները լուծման առաջնորդել ՀՀ Սահմանադրութեան շրջանակներում: Ընդամին առկայ պայմաններում անթոյլատրելի է աւելացնել մեր ժողովրդի ցաւը՝ աւելի վտանգելով պետութեան եւ մեր ժողովրդի ապագան: Առաջին հերթին իշխանութիւնները, խորհրդարանական ընդդիմութիւնը եւ բոլոր հասարակական-քաղաքական միաւորները պէտք է անյապաղ ձեռնամուխ լինեն երկխօսութեան՝ համագործակցութեան մթնոլորտում լուծումներ գտնելու խնդիրների կարգաւորման համար: Որեւէ շեղում այս ուղուց չի կարող ընդունելի նկատուել մեր ժողովրդի ու Եկեղեցու կողմից: Ստեղծուած իրավիճակում անհրաժեշտ է ի գին ամենի պահպանել ազգային մեր միասնականութիւնը եւ հեռու մնալ այն խթարող քայլերից:

6. Հետեւելով այս օրերին հրապարակաւ հնչող պաշտօնեանների ելոյթներին, Երեւանում տեղի ունեցող ընդդիմադիր ուժերի հանրահաւաքներին եւ ցոյցերին՝ այսու յորդորում ենք ՀՀ վարչապետին, իշխանութեան ներկայացուցիչներին եւ ընդդիմութեանը՝ զերծ մնալ ատելութիւն եւ թշնամանք հրահրող արտայայտութիւններից, սպառնալիքներից ու նմանօրինակ գործողութիւններից: Բռնութեան ցանկացած դրսեւորում, կորստի ցաւը կրող մեր ժողովրդին առաւել վհատեցնող եւ բորբոքող արարք պէտք է արժանանայ պարսաւանքի: Դատապարտում ենք Ազգային ժողովի նախագահի եւ որեւէ այլ անձի նկատմամբ կիրառուած բռնութիւնները, միեւնոյն ժամանակ քաղաքական ենթատեքստով որեւէ բռնաճնշում:

7. Մեր յորդորն է Ազգային ժողովին եւ յատկապէս մեծամասնական խմբակցութեանը, երկրի շահերի բարձր գիտակցութեամբ քաղաքական պատասխանատուութիւն դրսեւորելու եւ վերականգնելու ԱԺ բնականոն աշխատանքը՝ իրավիճակի թելադրութեամբ դրանից բխող բոլոր պարտաւորութիւններով հանդերձ: Ցարկ է ականջալուր լինել ժողովրդի ձայնին եւ հաղորդ հանրութեան հիասթափութիւններին եւ պահանջներին՝ գործել անձնական եւ կուսակցական շահերից վեր, պետական մտածողութեան բարձր գիտակցութեամբ ու պատասխանատուութեամբ: Հայրենիքն այսօր կարիքն ունի անյապաղ քայլերի ձեռնարկման:

8. Ամենքիս սրբազան պարտքն է Հայաստանում եւ սփիւռքում մեր գործուն ներդրումը բերելու այս

Շար.ը էջ 15

Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն Մեր Խօսքը

«Թէեւ մահուան շուքի մէջ ալ պտըտիմ, չարէն պիտի չվախնամ, վասն զի Դուն ինծի հետ ես» (Սաղմոս 23.4)

Հայաստանի եւ Արցախի հողերուն վրայ անցնող եօթը շաբաթներու ազգային աղէտալի վերիվայրումներու վաղորդայնին՝ ներկայիս կը դիմակալենք յետ-պատերազմեան դառն իրողութիւնը:

Հերոսներու սերունդի մը զոհաբերումը, սերունդ մը, որ տիրող տագնապէն աւելի կրտսեր է 5 մեր բնաշխարհ Արցախի խաղաղասէր ժողովուրդին տուներուն, դիւղերուն ու քաղաքներուն կործանումը, մեր պատմական անտառներու հրկիզումը, մեր եկեղեցիներուն, հիւանդանոցներուն եւ դպրոցներու անխնայ ռմբակոծումը, միջազգային օրէնքներու կողմէ արգիլուած զէնքերու գործածութիւնը եօթը շաբաթներու ընթացքին թշնամիին կողմէ Հայաստանի եւ Արցախի վրայ իր աւերը գործեց:

Աղէտ մըն է ա՛յս, որ ոչ ոք կրնայ ուրանալ, ցաւ մը, որ ոչ ոք կրնայ մեղմացնել:

Այո՛, յաղթանակի դագաթը դեռ չմագլցած՝ մենք քալեցինք մահուան շուքի ձորէն: Եւ այսօր այն պահն է, քաղաքակրթութեան ճանապարհի այն հանգրուանին, որուն մէջէն կ՚անցնի մեր մարտիրոս ժողովուրդն ու Հայրենիքը:

Ճանապարհը որուն վրայէն պիտի քալենք գալիք օրերուն մեզմէ կը պահանջէ անվեհեր ոգի, տոկունութիւն, ինքնավստահութիւն եւ քաջութիւն:

Յետ-պատերազմի վերականգնումի եւ համախմբումի այս օրերուն՝ որոշ համոզումներ կը բաժնենք եւ որոշ յանձնառութիւններ ընելու կոչուած ենք:

- Յարգանքով կը խոնարհինք մեր նահատակներու յիշատակին առջեւ, որոնք իրենց կեանքը զոհեցին Հայրենիքի պաշտպանութեան ի խնդիր, եւ կը հաստատենք մեր անվերապահ զօրակցութիւնը մեր ժողովուրդին:

- Կանգուն կը կենանք ժողովրդավարական սկզբունքներով ընտրուած Հայաստանի եւ Արցախի պետական իշխանութիւններուն եւ կը յարգենք մեր ժողովուրդին կամքը:

- Կը պահանջենք ճանաչումը Արցախի Հանրապետութեան անկախութեան՝ միացեալ ազգերու ընտանիքին կողմէ, այն հասկացողութեամբ որ անոր ապահովութիւնը երաշխաւորուի:

- Կոչ կ՚ուղղենք Արցախի ժողովուրդին վերադառնալ իրենց տունները եւ կը հաստատենք մեր յանձնառութիւնը գործնականպէս սատարելու վերադարձի գործընթացին:

- Կանգուն կը կենանք Հայաստանի Հանրապետութեան կողքին եւ կը շարունակենք մեր աշխատանքը՝ սատարելու անոր հոգեւոր աճման, ինչպէս նաեւ անոր ֆիզիքական եւ տնտեսական զարգացման:

- Կը վերահաստատենք մեր վճռական յանձնառութիւնը շարունակելու Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան կրթական, ընկերային, մարդասիրական ծրագիրներն ու գործունէութիւնները եւ ի պահանջեալ պարագային: ընդարձակելու զանոնք:

- Քրիստոնէական սիրոյ ոգիով պիտի շարունակենք մեր գործակցութիւնը եւ քոյր կազմակերպութիւններուն հետ:

- Կոչ կ՚ընենք բոլոր հայ կազմակերպութիւններուն եւ քաղաքական ուժերուն, որ ի սէր Հայրենիքին մէկդի դնեն իրենց տարբերութիւնները եւ սիրով ու համերաշխութեամբ գործակցին իրարու հետ:

- Այս Արեւին տակ, կը խարսխենք մեր հաւատքը մեր Տէր Յիսուս Քրիստոսի թափած արիւնին վրայ եւ յարատեւ կը ջանանք պատիւ բերել Աստուծոյ անունին:

Անցնող քանի մը շաբաթներուն, Աստուած պարգեւատրեց Արցախն ու Հայաստանը նորածին երախաներով: Արդ, անխոնջ սիրով եւ գործով ջանանք անոնց ապագան փայլուն պահել: Թող Աստուած խաղաղ եւ երջանիկ կեանք շնորհէ անոնց, որպէս զի իտէալական Հայրենիքի մը մէջ, անոնք կարենան հաւատքի ջահը բարձր պահել համայն մարդկութեան համար:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

(626) 797-7680

Բառերու Խորհրդաւոր Աշխարհը 417 ՀԵՐՈՍ

ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Երկու շաբաթ առաջ, յարգելի ընթերցող, «զոհ» բառի մասին խօսեր էինք: Տեսեր էինք, թէ այդ միավանկը չարահուչակ՝ նկարագրեր էր հայը, իր պատմութեան եւ ներկայի մէջ: Հայը, սակայն, ունի մէկ այլ երես,- եւ չստիպէք, որ ցոյց տայ անիկա-: Ինչպէս Խաչատուր Աբովեանը «Վէրք Հայաստանի» հերոսավէպի մէջ ըսեր էր- «Էդ ո՞ւմ վրայ էք թուր հանել: Հայոց մեծ ազգին չէ՛ք ճանաչում:» Այսօր յարգելի ընթերցող, երբ կը համարձակին կրկին վիրաւորել Հայաստանը, ու երբ ճակատող տղաները զոհէն կը կերպարանափոխուին հերոսի, անհրաժեշտ է ու վերին աստիճանի յարիր, որ խօսինք «հերոս» բառի մասին, ու խորին ակնածանքով դիտենք հայու այդ համբուրելի, միեւնոյն ժամանակ՝ բարեկամին ապահովութիւն, իսկ թշնամիին սարսափ պատճառող երկրորդ երեսը:

1850ականներուն, հայոց ազատագրական պայքարի թէժ օրերուն, հայերէնը ընդունեցաւ «հերոս» բառը: Եգէականի զաւակն է ան յունական ծագումով: Եւ այդ օրերուն, հայոց հնամեայ «դիւցազն» բառը հրաժեշտ տուաւ իր ժողովրդական գործածութեան, ինքզինք նուիրեց Սասունցի Դաւիթի եւ մեր լեռնաշխարհի բազմաթիւ այլ քաջագործ զաւակներու վէպը պատմելու առաքելութեան, ու «հերոս»ը յայտնուեցաւ հայոց լեռներու վրայ, խրամատներու մէջ, անմահութեան սեմին:

«Հերոս» բառը աւելի լաւ ընդունելութիւն գտաւ Հայկական Լեռնաշխարհի վրայ, քան իր ծննդավայրի մէջ: Այս հաստատումը ունի իր լեզուական փաստը: Մինչ յունական բառարաններու մէջ «հերոս»ով չինուած բառերու թիւը սահմանափակուած է թիւ ութով, հայերէնը իրաւունք ունի պարծենալու իր 35 պատկերալից

բառերով: Աւելին, վերջին երկու շաբաթներու ընթացքին յունական մամուլը, դիտելով թէ ինչ հերոսութիւններ կը կատարէ հայ զինուորը՝ սիրայօժար ձեւափոխեց իր իսկ ազատամարտիկներու համար եօթանասուն տարի առաջ արտասանուած խօսք մը. «Հայերը հերոսներու նման չեն պատերազմիր, այլ՝ հերոսներն են որ հայերու նման կը պատերազմին»:

«Հերոս» բառով շինուած բոլոր բառերը խիզախութիւններու եւ զոհողութիւններու ծնունդն են, ուստի կ՚արժէ ընտրանի մը լսել ու հպարտանալ անոնցմով. հերոսազարմ, հերոսաթռիչք, հերոսակերպ, հերոսանման, երոսատիպ, հերոսասիրտ, հերոսապատում, հերոսավէպ, ու ամենէն պատշտելին եւ համբուրելին՝ հերոսուհի: Պէտք է մտաբերել նաեւ Ուրֆայի, Հաճընի, Զէյթունի, Մուսա լերան, Շապին Գարահիսարի, Վանի, Ղարագիլիսայի, Սարտարապատի հերոսամարտերը, ու Գարեգին Նժդեհի խօսքը՝ «Կռիւներում հերոսանալուց աւելի դժուար է կեանքում հերոսավայել կեցուածք ունենալը»:

Իր 150 տարուայ պատմութեան մէջ «հերոս» բառը յաջողեցաւ գրական էջերու եւ մամուլի մէջ լայնօրէն գործածուող արտայայտութիւններ յառաջ բերել, ինչպէս՝ գրական հերոս, քնարական հերոս, ժողովրդական հերոս, աշխատանքի հերոս, անանուն հերոս, նորօրեայ հերոս, անձնուրաց հերոս, ազգային հերոս, առիւծատիպ հերոս, դիւցազնական հերոս, առասպելական հերոս ու վերջապէս՝ վտանգի առաջ չընկճուած հերոս: Իսկ այժմ կ՚առաջարկեմ խոնարհիլ քնարական երկու արտայայտութիւններու առջեւ. «Հերոսածին մայր» եւ «Հերոսամայր հայրենիք»: Վերջինը իր արժանի տեղը գտաւ բանաստեղծուհի Սոնա Վանեանի հերոսաշունչ մէկ տողի մէջ. «Հերոսամայր եմ, բայց չե՛մ արտասուում»:

«Հերոս» բառի անթերի ծառայութիւններէն մէկն էր հայկական գրատպութիւնը: Այս բառով լոյս տեսան բազմաթիւ հատորներ: Լոկ խորագիրները կը բաւեն, որ ընթերցողս հաղորդ ըլլայ հայոց պատմութեան վերջին 150 տարիներու դիւցազներգութեան. «Հերոսը- Մի արկած Զէյթունի վերջին ապստամբութիւնից», Ռուսչուկ, 1904, «Սիրելի հերոս- Հասան խանի ժամանակի պատմութիւն («Վէրք Հայաստանի» հերոսավէպի վերապատում), Թիֆլիս, 1905, «Ռուս-տաճկական պատերազմը (1877-1878) եւ նրա հայազգի հերոսները», Թիֆլիս, 1915, «Սասուն- Դիւցազներգութիւն 1915ի հերոսամարտէն», Պոստոն, 1921, «Կիլիկեան դրուագներ- Ֆնտըճագի հերոսամարտը», Փարիզ, 1921, «Զէյթունի վերջին դէպքերը- Վերապրող զէյթունցիներու դարձը հայրենիք. վերջին հերոսամարտը», Աղեքսանդրիա, 1922, «Լեռնահայաստանի հերոսամարտը- 1919-1921», Պուքրէշ, 1923:

Վերոյիշեալ բոլոր հերոսութիւնները անկասկած պիտի վերածուէին քնարական երգի եւ բանաստեղծութեան: 1956 թուակիր երգարանի մը մէջ գտնենք այդպիսի խօսքեր, ու երբ ընթերցենք զանոնք, թող հնչեն ռազմաշունչ թմբուկը եւ շեփորը. «Հայաստանը զարդ ունի, / Մեզ պէս հազար մարդ ունի, / Օդում, ծովում, ցամաքում / Հազար հերոս մարդ ունի», «Քաղաքներ, գիւղեր իրար են ձայնակցում, / Մեր հերոսների անմահ անուններից», «Հերոսի փառքով, մայրիկ, կը գամ մի օր ետ», «Հերոսներով ենք զօրանում»...: Ապա եկաւ հայ գրողը ու բացատրեց, թէ մենք ինչո՛ւ ենք այսպէս. «Հայուն մէջ երկու հոգի կայ՝ վախկոտ մը եւ քաջ մը, կամ ստրուկ մը եւ հերոս մը: Ամէն ազգի մէջ վախկոտը կը կծկուի քաջին ետեւը. ընդհակառակն է Հայուն մէջ. քաջը կը գտնուի վախկոտին տակը... Կը ցցուի պահեստի հոգին՝ խենթի նման: Ու կը զարնէ: Եւ իր հարուածը անսխալական է Պապին պէս», Նշան Պէշիկթաշլեան: Սիամանթօն, որ ըստ Յ. Յ. Զագմագճեանի՝ «Հերոսապաշտ բանաստեղծութեան հուժկու գրիչ» էր, ձօներգներ յօրինեց իր մարտական ընկերներուն համար. «Աւաղ, աւաղ, ընկեր, / Յաճախ, հեռաւոր ձայնդ հողին խորերէն արիւնածաղկի մը պէս կը բարձրանայ / Քու հերոսակերպ ուրուականիդ հետ եւ ասիկա՝ խստադէմ՝ ինծի հետ կը քալէ», «Եւ թո՛ղ քու հերոսի շունչիդ հովերէն գինովնամ, / Թէեւ հոգիս անարժան ըլլայ քու հերոսի հոգիդ խորասուզելու»: Դանիէլ Վարուժանը աւետեց ապառնի հերոսներու ծնունդը- «Ու վա՜ղը, վա՜ղն, ո՛վ հէգ Մայրեր, լսեցէ՛ք, / Ձեր արգանդէն մի առ մի / (Նոր Որդիներ) Պիտի ելլեն անոնք հսկայ եւ հերոս»: Վարուժանն էր, որ նկարագրեց, թէ ինչպէ՛ս հայը մը տան բակը ելած կը սպասէր իր որդին հերոսավայել դիմաւորելու համար: Ողբերգութիւն: Զօհուած էր ան. «Հերոս տղաս հոն զարնուա՜ծ է սրտէն. / Ախ հարս, ճրագդ մարէ՜...»: Աւետիք Իսահակեանը,

Շար.ը էջ 15

Ազգերու Լիկա. Հայաստանի Հաւաքականը Թիֆլիսի Մէջ Յաղթեց Վրացիներուն 2-1

Ֆութպոլի Եւրոպայի Ազգերու Լիկայի խմբային փուլի նախավերջին հանգրուանին Հայաստանի ազգային հաւաքականի սպանացի գլխաւոր մարզիչ Խոակին Կապառոսի ղեկավարութեամբ Թիֆլիսի մէջ հիւրընկալուեցաւ Վրաստանի հաւաքականին կողմէ եւ առաւելութեան հասաւ 2:1 հաշուով:

33-րդ վայրկեանին յարձակող Տիգրան Բարսեղեանի փոխանցումէն յետոյ աջքի ինկաւ կիսապաշտպան Գէորգ Ղազարեանը: Յաջորդ յարձակման ժամանակ Գէորգ Ղազարեանի հարուածէն յետոյ Վրաստանի խումբին կոլէն փրկեց դարպասապահը:

40-րդ վայրկեանին Հայաստանի հաւաքականի դարպասապահ Դաւիթ Եուրչենկոն կրկնակի ազատումով փրկեց խումբը կոլ ստանալէ:

64-րդ վայրկեանին Արման Յովհաննիսեան սեփական քառակուսիին մէջ թոյլ տուաւ խախտում: 11 մեթրանոց հարուածով վրացիները հաւասարեցուցին հաշիւը:

86-րդ վայրկեանին Տիգրան Բարսեղեանի փոխանցումէն յետոյ, Գերմանական «Հոֆընհայմի» յարձակող Սարգիս Ադամեան նշանակեց յաղթանակի կոլը եւ խաղը աւարտեցաւ 1-2 արդիւնքով:

Մակեդոնացիները Յաղթեցին Էստոնիայի Խումբին 2-1

Ֆութպոլի Եւրոպայի Ազգերու Լիկայի փուլի նախավերջին հանգրուանին Հիւսիսային Մակեդոնիայի հաւաքականը ընդունեց էստոնացիներուն եւ առաւելութեան հասաւ 2:1 հաշուով:

Խումբերը ընդգրկուած են Հայաստանի հաւաքականի հետ նոյն խումբին մէջ:

Մակեդոնացիները 9 միաւորով գլխաւորեցին մրցաշարային աղիւսակը: Էսթոնիան 2 միաւորով վերջին տեղը կը գրաւէ: 4 հանդիպում ունեցած Վրաստանը 6 միաւորով երկրորդ տեղը կը գրաւէ: Հայաստանը (4 խաղ) երրորդն է՝ 5 միաւոր:

Յիշեցնենք, որ խումբէն փլեյ-օֆֆին մասնակցելու իրաւունք կ'ունենայ միայն առաջին տեղ գրաւած խումբը:

Գերմանիան Ու Ֆրանսան Յաղթանակներ Արձանագրեցին, Սպանիան Միաւորներ Կորսնցուց

Ֆութպոլի Ազգերու Լիկայի Նոյեմբեր 14-ին տեղի ունեցան խմբային փուլի նախավերջին՝ 5-րդ շրջանի հանդիպումները A, C եւ D դասակարգերուն մէջ:

A դասակարգի երրորդ խմբակին մէջ Ֆրանսան նուազագոյն հաշուով յաղթանակ արձանագրեց Փորթուկալի նկատմամբ: Ֆրանսայի յաղթական կոլը նշանակեց Նկոլօ Կանտէն:

Խումբի միւս խաղին Շուեդը 2:1 արդիւնքով յաղթեց Խորուաթիային: Կոլերու հեղինակ դարձան Տեան Կուլուշեւսկին եւ Մարկուս Տանիելսոնը, որը նաեւ ինքնագոլի հեղինակ դարձաւ:

A դասակարգի չորրորդ խումբին մէջ Գերմանիան 3:1 հաշուով յաղթանակ արձանագրեց Ուքրանիոյ դէմ:

Խմբակի միւս խաղին Սպանիոյ ազգային հաւաքականը ոչ ոքի խաղաց Զուիցարիոյ հետ:

www.massispost.com

Եւրօ-2020-ը Կրնայ Ամբողջութեամբ Տեղափոխուիլ Մեծն Բրիտանիա

Մեծ Բրիտանիան կրնայ ամբողջութեամբ կազմակերպել ֆութպոլի Եւրոպայի Ախոյեանութիւնը, կը հաղորդէ Daily Mail-ը:

ՈՒԵՖԱ-ն կը շարունակէ հիմնական նկատել Եւրօ-2020-ի կայացման ներկայի տարբերակը, սակայն կը քննարկէ նաեւ այլընտրանքային տարբերակներ: Կան քննարկումներ այն ուղղութեամբ, որ մրցաշարը կրնայ տեղի ունենալ միայն Մեծն Բրիտանիոյ մէջ:

Ֆրանսական Le Parisien-ը եւս կը յայտնէ, որ Եւրօ-2020-ը քորոնաժահրի համաւարակի պատճառով կրնայ կայանալ մէկ երկրի մէջ: Կը նշուէր նաեւ Ռուսաստանը:

Յիշեցնենք, որ քորոնաժահրի համաւարակի պատճառով Եւրոպայի Ախոյեանութիւնը յետաձգուած էր մէկ տարիով եւ տեղի պիտի ունենայ 2021 թուականի Յունիսի 11-էն Յուլիսի 11-ը: Եւրոպայի Ախոյեանութեան աւարտական մրցաշարը առաջին անգամ ըլլալով տեղի պիտի ունենայ 12 քաղաքներու մէջ՝ Լոնտոնի, Միւնխի, Հռոմի, Քոբենհակընի, Պուխարեստի, Ամստերդամի, Տապլինի, Պիլպաոյի, Պուտապեշտի, Սանկտ Պետերբուրգի, Կլազկոյի եւ Պաքուի մէջ:

ԱԱ-2022. Պրազիլիայի, Ուրուկուէյի Ու Չիլիի Յաղթանակները

Ֆուտպոլի Աշխարհի Բաժակի հարաւամերիկեան գօտիի ընտրական խաղաշրջանի երրորդ հանդիպումներուն Պրազիլի հաւաքականը սեփական դաշտին մէջ նուազագոյն հաշուով յաղթեց Վենեզուելային: Դաշտի տէրերու միակ կոլը երկրորդ խաղակէսին նշանակեց անգլիական «Լիւերփուլի» յարձակող Ռոպերթո Ֆիրմինոն:

Չիլիի հաւաքականը իտալական «Ինտերի» կիսապաշտպան Արթուրօ Վիտալի երկու կոլերուն շնորհիւ 2:0 հ արդիւնքով յաղթեց Փերուին, իսկ Ուրուկուայի ազգային խումբը հիւրընկալուելով 3 անպատասխան գնդակ ուղարկեց Գոլումպիայի հաւաքականի դարպասը:

«Լոս Անճելըսի» ուրուկուահայ յարձակող Տիէկօ Ռոսի Մարաշլեան Ուրուկուայի հաւաքականի փոխարինողներու շարքին էր, սակայն չմասնակցեցաւ խաղին:

Երրորդ խաղաշրջանէն յետոյ Պրազիլի հաւաքականը 9 կէտով կը գլխաւորէ աղիւսակը: Երկրորդ տեղը գտնուող Արժենթինը ունի 7 կէտ, իսկ Ուրուկուէյը ու Վենեզուելան՝ 6-ական:

Ուեֆա-Ն Մոուրինիոյին Մէկ Խաղով Հեռացուցած է Եւրոպայի Գաւաթներէն

Լոնտոնի «Թոտենհեմի» գլխաւոր մարզիչ Ժոզէ Մոուրինիոն զրկուած է Եւրոպայի գաւաթներու մէկ խաղին մասնակցելու իրաւունքէն: Փորտուկալացի մասնագէտը պատժուած է պելճիգական «Անտուերպէնի» դէմ Եւրոպայի Լիկայի երկրորդ շրջանի խաղին տեղի ունեցած միջադէպին համար: «Թոտենհեմը» տուգանուած է 28 հազար եւրօ, կը հաղորդէ Goal.com-ը:

Յիշեցնենք, որ Մոուրինիոյի պատճառով Հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած հանդիպումը սկսած էր ուշացումով: Եւրոպայի Լիգայի երրորդ խաղաշրջանէն յետոյ «Թոտենհեմը» 6 միաւորով երկրորդն է J խմբակէն ներս:

Շնորհակալիք

Մեր սիրելի ամուսնոյն, հոր եւ մեծ հոր՝ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻ մահուան տխուր առթիւ կու գան մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու բոլոր անոնց որոնք մասնակից եղան մեր սուգին, իրենց ներկայութեամբ, հեռաձայններով, էլ. նամակներով, նուիրատուութիւններով եւ դամբանական խօսքերով:

Յատուկ շնորհակալութիւն կ՚ուզենք յայտնել Արեւմտեան Ամերիկայի Թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանին, նախկին Առաջնորդ Վարչէ Արք. Յովսէփեանին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, Հայ Մարմնամարզական Միութեան, Հայկական Կրդական Բարեսիրական Միութեան, Պէյլանի Հայրենակցական Միութեան եւ «Մասիս» շաբաթաթերթին:

Նուիրատուութիւն

ԸՆԿ. ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻ մահուան տխուր առթիւ «Հայաստան» Հիմնադրամին եղան հետեւեալ նուիրատուութիւնները.

Տէր եւ Տիկին Յարութիւն Պոյամեան	2000 տոլար
Տէր եւ Տիկին Խաչիկ Քէշիշեան	500 տոլար
Տէր եւ Տիկին Թադէոս Քորողլեան	500 տոլար
Տէր եւ Տիկին Վազգէն Խոտանեան	500 տոլար
Տէր եւ Տիկին Վարդան Քորողլեան	500 տոլար
Տէր եւ Տիկին Գրիգոր Խոտանեան	500 տոլար
Տէր եւ Տիկին Ժիրայր Կիրակոսեան	300 տոլար
Տէր եւ Տիկին Վարդան եւ Կարինէ Տեփոյեան	300 տոլար
Տէր եւ Տիկին Յարութ Տէր Դաւիթեան	250 տոլար
Տէր եւ Տիկին Աւօ Մազմանեան	200 տոլար
Տիար Ալպերթ Մինասեան	200 տոլար
Տէր եւ Տիկին Գալուստ Տէրտէրեան	200 տոլար
Տիար Վարդավառ Անթոսեան	200 տոլար
Տէր եւ Տիկին Արշակ եւ Վարդուհի Գազանճեան	150 տոլար
Տէր եւ Տիկին Գրիգոր Գալայճեան	150 տոլար
Իրինա Պետրոս Ջիլեան	100 տոլար
Տիկ. Օժէնի Պարսումեան	100 տոլար
Յասմիկ Այվազեան	100 տոլար
Նարինէ Առաքելեան	100 տոլար

Նուիրատուութիւն

ԸՆԿ. ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻ մահուան տխուր առթիւ հետեւեալ նուիրատուութիւնները եղած են «Մասիս» Շաբաթաթերթին.

Տօքթ. Գրիգոր Գրիգորեան	$1000
Պետրոս Անսրլեան	$200
Շիրակաշէն Խմբակցութիւն	$200
Կիլիկեան Բարեսիրական Միութիւն	$500
Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան	$100
Տիար Պետրոս Սէֆէրեան	$100
Տէր եւ Տիկ. Յակոբ Խպոյեան	$100
Տէր եւ Տիկ. Ոսկեբերան Ղազարեան	$100
Տէր եւ Տիկ. Սամուէլ Ալաճաճեան	$100
Տիար Ալիք Ասատրեան	$100
Տօքթ. եւ Տիկ. Ռուբէն Եաղսզեան	$200
Տօքթ. եւ Տիկ. Յարութ Եաղսզեան	$200
Տիկ. Անահիտ Թովմասեան	$200
Տէր Տիկ. Գաբրիէլ Մոլոյեան	$100
Տէր եւ Տիկ. Վահէ Աջապահեան	$100

ՀԵՐՈՍ

Շարունակուած էջ 13-էն

մինչդեռ, ճարդ մարելու փոխարէն բոլոր հայրերուն հրաւիրեց կենաց վերձնելու: Ահա «Մեծ յաղթանակի օրը» բանաստեղծութեան այդ պատկերը. «Եղբայրնե՞ ր, որդուս կենացը խմե՛նք. / Հերոս է որդիս, յաղթեց թշնամուն, / Ձեր որդիների կենացն էլ խմենք»:

Այժմ անդրադառնամ «հերոս» բառի վերջին զոհողութեան: Ան հայ ազգի երկու հանրապետութիւններու մէջ պետական վեհագոյն կոչում է: Արտօնեցէք նկարագրեմ զանոնք. «Հայաստանի ազգային հերոս», Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն կոչում, հիմնադրուած՝ 1994 թուականին «Բարձրագոյն կոչման մասին» օրէնքով: / «Արցախի հերոս», Արցախի Հանրապետութեան բարձրագոյն պետական կոչում:

Դեռ նոր է «հերոս» բառը հայոց բառարաններու մէջ: Օտարամուտ է միեւնոյն ժամանակ եւ դեռ սակաւ հաղորդ հայոց մեծ ազգին: Ժամանակ տուէք, որ ան լաւ ճանչնայ մեր տեսակը, ապա ան հաստատ կ՚ըմբռնէ հայու նկարագիրը եւ կը նկարագրէ զայն նորանոր ածականներով: Ես առաջարկեմ մէկ երկու հատը՝ անհամար անգամներ իրականացած, բայց շրթունքով չարտայայտուած գաղափարներ- հերոսամիտ, հերոսաճեմ, հերոսասլաց, հերոսաբոյր, հերոսապար...: Իսկ երբ տեսնէք տասնչորս տարեկան տղայ մը, շիկահեր, կապուտաչեայ ու ժպտադէմ, որ մահը արհամարհելով մայր ու քոյր կը փրկէ թշնամիի կրակէն, -երբ ճակատ մեկնած է հայրը-, զայն կոչեցէք՝ «մանկահերոս»:

Յօդուածս այսօր աւարտեմ մէջբերելով Վան ծնած, Վանի հերոսամարտին վառօդ շնչած բանաստեղծ Մկրտիչ Խերանեանի տողերով, որոնք կը պարունակեն «հերոս» բառի ընտիր մէկ տարբերակը. «Ու կարծեցիք, թէ / Ջնջեցի՞ք դուք մեր հետքերը բոլոր, / Խեղդեցի՞ք ձայնը չորսհազարամեայ հայոց պատմութեան / Օ՜, խելագարնե՛ր / Ամէն մի ճամփայ եւ ամէն ափ հող՝ / Մեր ոտնահետքն է պահում իր վրայ. / Հետքը մեր մուրճի՝ իւրաքանչիւր քար, / Որ վէպ է, վիպերգ, հերոսերգութիւն»:

Տիգրան Սարաֆեան

Շարունակուած էջ 13-էն

Ոգեկոչական այս տողերը «ՎԱՐՁՔԴ ԿԱՏԱՐ» ըսելու ձեւ մըն են անշուշտ մարդու մը, որուն անձին եւ գաղափարներուն իբրեւ քաջածանօթ, իբրեւ հարազատ մը, վստահ եմ որ ան ինծի պէս պիտի մտածէր, որ իր անձին ընդմէջէն երախտագիտական արտայայտութիւնները պիտի ուղղուին, պէտք է ուղղուին նաեւ իրմէ առաջ, իրեն ժամանակակից եւ ինչու չէ նաեւ իրմէ ետք ՀՄՄ-ին եւ ՀՄՄ-ին ճամբով Ազգին եւ զոյգ՝ որդեգիր ու Մայր հայրենիքներուն, Լիբանանին ու Հայաստանին ծառայութեան նուիրեալներուն, որոնց օրինակով ներշնչուած են, պէ՛տք է ըլլան իրարայաջորդ սերունդները, որոնց մէկ յանձնառու ներկայացուցիչն է այսօր Տիգրանի որդին՝ Համբիկը: Տարբեր չէր կրնար ըլլալ: Այդ ներշնչման արտայայտութիւնն է կեանքի գնով Արցախի եւ Հայաստանի պաշտպանութեան նուիրեալներու կողքին ու թիկունքին կանգնելու նոր սերնդականներուն յանձնառութիւնը:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը

Շարունակուած էջ 16-էն

վիճակի յաղթահարմանն ի նպաստ: Յանձնառութիւն պիտի դրսեւորենք նաեւ ըստ ամենայնի զօրակցելու արցախահայութեանը եւ Արցախի իշխանութիւններին վերակազմակերպելու մեր ժողովրդի զաւակների կեանքը: Այդ ուղիով պէտք է պաշտպանենք հայրենի հողի վրայ ապրելու մեր իրաւունքը: Արցախը չպէտք է հայաթափուի:

9. Առանձնակի ցաւով ենք անդրադառնում յանձնուելիք տարածքներում մեր ինքնութեան բազմադարեայ վկաների՝ մատուռների, եկեղեցիների ու վանքերի, ամրոցների, պատմամշակութային կոթողների ու թանգարանների որբացման իրողութեանը: Կոչ ենք անում պատկան պետական մարմիններին եւ սփիւռքեան կարող ուժերին, համախորհուրդ Հայոց Եկեղեցու հետ, ամեն ջանք ի գործ դնելու՝ փրկելու դրանք Ադրբեջանի հայատեաց քաղաքականութեան հետեւանքով յետագայ աւերից:

10. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագոյն հոգեւոր խորհրդի զօրակցութեամբ պիտի շարունակի իր ջանքերը ներդնել երկրում միասնականութեան ու համերաշխութեան մթնոլորտի հաստատման եւ անհրաժեշտ գործընթացները օրինական ուղիներով առաջնորդելու համար:

Մեր խոնարհումն ենք բերում հայրենիքի պաշտպանութեան սրբազան գործում անօրինակ սխրանքներ դրսեւորած մեր բոլոր քաջարի զինուորներին, զօրականներին եւ աշխարհազօրայիններին: Նաեւ աղօթում ենք ռազմական յանցաւոր գործողութիւնների հետեւանքով զոհուած հայորդիների հոգիների հանգստութեան համար, հայցելով Ամենազօր Սուրբ Հոգու մխիթարութեան ու սփոփանքի շնորհները նահատակուած մեր զաւակների ընտանիքներին, հարազատներին եւ մեր ողջ ժողովրդին: Ապաքինում ու հոգու նորոգութիւն ենք մաղթում վիրաւորուած մեր զինուորներին՝ հայցելով Տիրոջ զօրակցութիւնն ու օգնականութիւնը նրանց:

Կոչ ենք ուղղում մեր ժողովրդի զաւակներին այս դժուարին պայմաններում պահպանել զգօնութիւնը, ողջախոհութիւնը եւ հաւատն ու վստահութիւնը, որ միաբան ընթացքով մենք ի զօրու ենք դուրս գալու ստեղծուած բարդ իրավիճակից, յաղթահարելու խնդիրներն ու յառնած մարտահրաւէրները եւ միասնականութեամբ կերտելու հզօրութիւնը մեր հայրենիքի, նորոգ յաղթական առաջընթացը եւ լուսաւոր գալիքը մեր ժողովրդի:

Աղօթում ենք, որ Ամենողորմ Տէրն Իր սիրով ու օրհնութեամբ անսասան, ապահով ու խաղաղ պահի հայրենի մեր երկիրը՝ տոկունութիւն եւ կորով պարգեւելով մեր ողջ ժողովրդին»:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* $50,00 * $100,00 (first class) for USA

$ 125,00 (Air Mail) for Canada.

$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -------- ----------

Address: ----------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: ----------

Tel :---------- Email: ----------

STOP FALSE ACCUSATIONS
STOP SPREADING FALSE INFORMATION

Piknik cheese made by **Nordex Food** is a private and family-owned company.The founders and the owners are 100% Danish.
NO DONATIONS ARE MADE TO ANY COUNTRY WHAT SO EVER.
Legal action will be taken against any company or individual who spreads the false accusations.

ԴԱԴՐԵՑՈՒՑԷՔ ԱՆՀԻՄՆ ՁՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԴԱԴՐԵՑՈՒՑԷՔ ՍՈՒՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼԸ

«Փիքնիք» պանիրը պատրաստուած է «Նորտէքս Ֆուտ»ի կողմէ, որ անձնական ընտանեկան ընկերութիւն մըն է: Հիմնադիրները և տէրերը 100 տոկոսով դանիացի (Danish) են:
ՈՐԵՒԷ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐԵՒԷ ԵՐԿՐԻ ՉԵՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ:
ՕՐԻՆԱԿԱՆ-ԴԱՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ՊԻՏԻ ԱՌՆՈՒԻՆ ՈՐԵՒԷ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՈԵՒԷ ԱՆՀԱՏԻ ԴԷՄ, ՈՐ ԿԸ ՏԱՐԱԾԷ ԱՆՀԻՄՆ ՁՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ:

NORDEX FOOD

Dear customer,

NORDEX FOOD is a privately owned Danish company with production and sales of white cheese to the whole world.

The PIKNIK/Sütdiyari/Dairyland White Cheese is produced at our dairy in Austria with Austrian milk.

NORDEX FOOD do not support any political agenda in any country.

Best regards
NORDEX FOOD A/S
Martin Pedersen, CEO

NORDEX FOOD A/S
Nordre Ringgade 2 · DK-9330 Dronninglund · Denmark
Phone: +45 96 47 15 00 · Fax: +45 96 47 18 00

export@nordex-food.dk
www.nordexfood.dk
CVR-nr. DK 16 99 40 06